



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՆՈ-  
ԻՐԱՎՈՒՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՌԵԴՊԱՆ



## ԱՐՏԱԶԵՐԹ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՄԸՆԴՀԱՆՈՒՐԻ ՊԱՌԵԴՊԱՆԻ  
ԳԼԽԱՎՈՐԱԾ ԿԸՆԿՏԱՆԱԼԵԱՅԻՆ ԽՄԲԻ՝  
ԳԵՂԱՐՔՈՒՄԻՔԻ ԵՎ ՏԱԿՈՒԾԻ ՄԱՐԶԵՐ  
ԿԱՏԱՐՎԱԾ ԱՅՅԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (ՀՈՒԼԻՍ-ՕԳՈՆԾՈՒ)



Սկանավորել PDF  
տարբերակի համար



ԵՐԵՎԱՆ 2022

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I.	ՆԱԽԱԲԱՆ	3
II.	ՄԵՇՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	4
III.	ԳԵՂԱՐՔՈՒՍԻՔԻ ՄԱՐԶ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՅՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	7
Գլուխ 1.	Վերին Շորժա (այդ թվում՝ Վերին Շորժայի սարատեղ) և Ներքին Շորժա բնակավայրերում բարձրացված խնդիրների վերաբերյալ	7
Գլուխ 2.	Նորաբակ բնակավայրում բարձրացված խնդիրների վերաբերյալ	12
Գլուխ 3.	Կութ բնակավայրում բարձրացված խնդիրների վերաբերյալ	16
Գլուխ 4.	Սոթք բնակավայրում բարձրացված խնդիրների վերաբերյալ	19
IV.	ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՅՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	21
Գլուխ 1.	Անվտանգային հարցերի վերաբերյալ	21
Գլուխ 2.	Խմելու ջրի հասանելիության խնդրի վերաբերյալ	25
Գլուխ 3.	Ոռոգման ջրի հասանելիության խնդրի վերաբերյալ	28
Գլուխ 4.	Գազի մատակարարման խնդրի վերաբերյալ	31
Գլուխ 5.	Բնակիչների զբաղվածության ապահովման և սոցիալական բնույթի այլ խնդիրների վերաբերյալ	32
Գլուխ 6.	Ուսումնական հաստատությունների շենքային պայմանների և կրթության իրավունքի իրացման վերաբերյալ	34
Գլուխ 7.	Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների իրացման հետ կապված խնդիրների վերաբերյալ	38
Գլուխ 8.	Առողջության պահպանման իրավունքի հետ կապված խնդիրների վերաբերյալ	40
V.	ԽՆԴԻՐՆԵՐԻ ԴԻՏԱՐԿՈՒՄԸ ԻՐԱՎԱԿԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ	43
Գլուխ 1.	Բավարար կենսամակարդակի իրավունք	45
Գլուխ 2.	Հոգեբանական ճնշումներ՝ անվտանգության ամենօրյա սպառնալիքներով ու շարունակվող կոնֆլիկտի բաղադրիչների առկայությամբ՝ միտված սահմանամերձ բնակավայրերի հայաթափմանը	49
Գլուխ 3.	Խմելու ջրի հասանելիության իրավունք	63
Գլուխ 4.	Բուժօգնություն ստանալու իրավունք	65
VI.	ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	68

## I. ՆԱԽԱԲԱՆ

1. 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի զինված ստորաբաժանումների կողմից Արցախի ուղղությամբ սկսված ռազմական գործողությունների արդյունքում հատկապես խոցելի իրավիճակ է ստեղծվել Տավուշի ու Գեղարքունիքի մարզերում սահմանամերձ համայնքների բնակչության համար:
2. Վերոգրյալ հանգամանքով պայմանավորված Մարդու իրավունքների պաշտպանի գլխավորած աշխատանքային խմբերի կողմից 2022 թվականի հունիսուստոս ամիսներին այցեր են կատարվել Տավուշի և Գեղարքունիքի մարզեր տեղում առկա խնդիրներին ծանոթանալու, Մարդու իրավունքների պաշտպանի սահմանադրական մանդատի շրջանակներում դրանց լուծման ուղղությամբ գործողությունների ձեռնարկման, ինչպես նաև փաստահավաք աշխատանքների իրականացման նպատակով:
3. Սույն գեկույցն ամփոփվել է սեպտեմբերին և պետք է իրապարակվեր սեպտեմբեր ամսվա վերջին, սակայն Ադրբեջանի կողմից Հայաստանի վրա սեպտեմբերի 12-ի լուս 13-ի իրականացրած հարձակումը փոխեց իրավիճակը՝ Պաշտպանի աշխատակազմի համար առաջացնելով ավելի իրատապ արձագանքման աշխատանքի անհրաժեշտություն: Չնայած դրան, ուշագրավ է, որ սույն գեկույցի տարբեր հատվածներում վերլուծված փաստերը, որոնք մատնացույց են անում ադրբեջանական զինված ուժերի կողմից սահմանամերձ համայնքների բնակչության նկատմամբ տևական և շարունակական հոգեբանական ճնշումների գործադրումը, ինչպես նաև ադրբեջանցի պատգամավորների հայտայց ելույթներն ու ուժի սպառնալիքի վերաբերյալ հայտարարությունները, վերահաստատում են, որ ադրբեջանական կողմը, չնայած բանակցություններին, մշտապես պատրաստվել է հարձակման: Ավելին, սեպտեմբերի 13-ի հարձակման ընթացքում քաղաքացիական անձանց ու կենսական ենթակառուցվածքների թիրախավորումը, ոչ այլ ինչ է, քան սույն գեկույցում նկարագրված սահմանամերձ համայնքների ահաբեկման ու վնասման գործողություններին հաջորդող ակտիվ փուլ:

## II. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

4. Զեկույցը նպատակ է հետապնդում հավաքագրել, վերլուծել և ներկայացնել 2022 թվականի հուլիսից օգոստոս ամիսների ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի գլխավորած աշխատանքային խմբերի՝ Գեղարքունիքի և Տավուշի մարզեր կատարված այցերի ընթացքում ստացված փաստահավաք աշխատանքների արդյունքները:
5. 2022 թվականի օգոստոսի 2-ին Մարդու իրավունքների պաշտպանի գլխավորած աշխատանքային խումբը այցելել է Գեղարքունիքի մարզ, որի շրջանակներում Պաշտպանը հանդիպել է << Գեղարքունիքի մարզպետի հետ:
6. Հանդիպումներ են կայացել տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների, ինչպես նաև սահմանամերձ բնակավայրերի բնակիչների հետ:
7. Այցեր են իրականացվել << Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի կազմում ներառված Վերին Շորժա (այդ թվում՝ Վերին Շորժայի սարատեղ), Ներքին Շորժա, Նորաբակ, Կութ և Սոթք գյուղական բնակավայրեր: Նշված բնակավայրերում հանդիպումներ են տեղի ունեցել Վարդենիսի համայնքապետարանի ներկայացուցիչների, նշված համայնքի կազմում ներառված գյուղական բնակավայրերի բնակիչների և վարչական ղեկավարների հետ:
8. Հանդիպումներ և առանձնազրույցներ են տեղի ունեցել տեղերում ծառայություն իրականացնող զինված ուժերի ծառայողների հետ:
9. Հավաքագրված տեղեկությունները ճշգրտվել են ինչպես տեղական քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, այնպես էլ հետաքրնող լրագրողական կազմակերպությունների և Պաշտպանի հաստատության հետ համագործակցող դերակատարների հետ:
10. 2022 թվականի հուլիսի 25-28-ը Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը մշտադիտարկման այցեր է իրականացրել Տավուշի մարզի Ազատամուտ, Բաղանիս, Կիրանց, Ոսկեպար, Ներքին Կարմիրաղբյուր, Նորաշեն, Մովսես, Այգեպար, Չինարի, Այգեձոր, Արծվաբերդ, Չորաթան, Բերքաբեր, Բարեկամավան, Սարիգյուղ, Կոթի գյուղերում:
11. Մշտադիտարկման այցերի ընթացքում ուսումնասիրվել են բնակիչներին բժշկական օգնության տրամադրման և բուժսպասարկման հնարավորություններն ու

խնդիրները, բնակիչների սոցիալ-տնտեսական իրավունքների հետ կապված մի շարք հարցեր:

12. Այցերի շրջանակներում առանձնահատուկ ուշադրություն է դարձվել երեխաների կրթության իրավունքի իրացման պայմանների, կարիքների, ներառական միջավայրի ձևավորման համար առկա հնարավորությունների ուսումնասիրմանը:

13. Առանձնազրույցներ են իրականացվել բնակիչների հետ, քննարկումներ են տեղի ունեցել նախադպրոցական ուսումնական հաստատությունների, կրթական հաստատությունների ներկայացուցիչների և պատասխանատուների, ինչպես նաև մի շարք հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:

14. Այցերի ընթացքում բարձրացված անհատական և համակարգային խնդիրները քննարկվել են համայնքապետարանների, վարչական շրջաններում բուժօգնություն և բուժսպասարկում իրականացնող անձնակազմերի ներկայացուցիչների, ինչպես նաև ոլորտային իրավասու մարմինների հետ:

15. Տավուշի մարզում իրականացված մշտադիտարկման այցերի ընթացքում արձանագրված համակարգային խնդիրների վերաբերյալ մանրամասն դիտարկումները, դրանց լուծման վերաբերյալ Պաշտպանի առաջարկները և դիրքորոշումները ներկայացվել են «Վարչապետի աշխատակազմին, «տարածքային կառավարման և Ենթակառուցվածքների նախարարությանը, «աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը, «արտակարգ իրավիճակների նախարարությանը, «կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը, «Տավուշի մարզպետարանին, ինչպես նաև Միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի գրասենյակին, իսկ անհատական բնույթի խնդիրները Պաշտպանի իրավասությունների շրջանակում քննարկվել և ներկայացվել են նաև իրավասու պետական և տեղական ինքնակառավարման այլ մարմիններին:

16. Իրավասու մարմիններին հասցեագրված գրություններին ի պատասխան՝ վերջիններիս կողմից ներկայացվել են պարզաբանումներ և տեղեկատվություն արձանագրված խնդիրների, ինչպես նաև դրանց լուծման ուղղությամբ իրականացված և նախատեսվող գործողությունների վերաբերյալ՝ ըստ ոլորտների և բնակավայրերի՝ հստակ ժամանակացույցով:

17. Զեկույցը կառուցվածքային առումով բովանդակում է հետևյալ բաժինները՝ կատարված փաստահավաք աշխատանքների արդյունքում ստացված տեղեկությունների ներկայացում, ձեռք բերված փաստերի նկատմամբ կիրառելի իրավական վերլուծություն, ինչպես նաև Մարդու իրավունքների պաշտպանի առաջարկությունները բարձրացված խնդիրների առնչությամբ:

### III. ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՅՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**Գլուխ 1. Վերին Շորժա (այդ թվում՝ Վերին Շորժայի սարատեղ) և Ներքին Շորժա բնակավայրերում բարձրացված խնդիրների վերաբերյալ**

18. Ադրբեյջանի կողմից 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված պատերազմից հետո ադրբեյջանական զինծառայողների կողմից հաճախակի են կրակոցները բնակավայրերի անմիջական հարևանությամբ և դրանք որոշ դեպքերում թիրախավորված են՝ գյուղերի ու բնակչության տների ուղղությամբ: Բնակչությունը՝ հավաստմամբ՝ անմիջական հարևանությամբ գտնվող ադրբեյջանական



զինծառայողներն արձակում են կրակոցներ տարբեր տրամաչափի զինատեսակներից: Առանձին ուղղություններում կրակոցները պարբերական են, ինչպես ցերեկային, այնպես էլ գիշերային ժամերին, պարզ լսելի են գյուղերում ու առաջացնում են



անհանգստություն, առաջին հերթին՝ ծերերի ու երեխաների շրջանում:

19. Բնակչությունը տեղեկացրել են, որ ադրբեյջանական անօրինական տեղակայումների պատճառով չեն կարողանում օգտագործել իրենց վարելահողերը, արոտավայրերը և խոտհարքները: Գործնականում ծայրաստիճան դժվարացնել իսկ որոշ դեպքերում անհնարին է դարձել սեփականության իրավունքի իրացումը:

Ադրբեջանական զինծառայողները դրսւորում են անընդունելի պահվածք, սպառնալիքներ ներկայացնում գյուղացիներին զենքի ցուցադրմամբ։ Նրանք դիրքեր են տեղակայել Վերին Շորժայի սարատեղին բավական մոտ վայրերում և դրանով գորեթե անհնարին դարձրել հողատարածքների օգտագործումը։ Ավելին՝ բնակիչները նշել են, որ ստիպված են եղել վաճառել իրենց կենդանիները կամ դրանց մի մասը, քանի որ չեն կարողացել խոտի ձմեռվա անհրաժեշտ պաշար հավաքել։

20. Վերին և Ներքին Շորժա



բնակավայրերում, ինչպես նաև բնակավայրի սարատեղի հատվածում փաստահավաք աշխատանքների արդյունքում ստացված տվյալներն ապացուցում են, որ բնակավայրը գտնվում է ադրբեջանական զինված ուժերի ուղիղ նշանառության տակ։ Ադրբեջանական զինծառայողները պարբերաբար կրակում են գյուղի և քաղաքացիական բնակիչներով բնակեցված սարատեղի ուղղությամբ (տե՛ս [տեսանյութը](#))։ **Ադրբեջանական զինված ուժերն անօրինական տեղակայված են ՀՀ ինքնիշխան տարածքում, գտնվում են ՀՀ բնակիչներին օրինական փաստաթղթերով պատկանող հողատարածքներում** (հիշալ բնակավայրերում զգալի տարածքներ ադրբեջանական զինված ուժերի վերահսկողության ներքո են գտնվում)։

21. Շարունակվում են ադրբեջանական զինված ուժերի կողմից բնակիչներին պատկանող ընտանի կենդանիների գողությունները, որոնք այդպես էլ չեն վերադարձվում։ Արձանագրվել են նաև կրակոցների հետևանքով կենդանիների սատկելու դեպքեր։ Ավելին, այս տարածքների անմիջական հարևանությամբ գտնվող հողատարածքները նույնպես չեն օգտագործվում, քանի որ նշանառության տակ են ու մարդկանց մոտենալու դեպքում ադրբեջանական զինծառայողները կրակում են՝ գյուղատնտեսական աշխատանքները համարելով ինժեներական աշխատանք։

22. Բնակիչները նշել են նաև, որ ադրբեջանական կողմի կրակոցները զսպվում են ՀՀ զինված ուժերի կանխարգելիչ կրակոցների շնորհիվ, որոնք նպատակ ունեն պաշտպանել մարդկանց կյանքն ու առողջությունը։ Այսինքն՝ ադրբեջանական զինված

ուժերը խաթարում են քաղաքացիական բնակչության կյանքի իրավունքն ու առողջությունը, մարդկանց խաղաղ կենսագործունեությունը, սեփականության իրավունքն ու բնականոն կյանքը, թույլ չեն տալիս գյուղատնտեսությամբ զբաղվել։ Ադրբեջանական տեղակայումներն ու նկարագրված արարքները բացահայտ ուժնահարում են միջազգայնորեն երաշխավորված մարդու իրավունքները։

23. Վերին և Ներքին Շորժա բնակավայրերի վարչական ղեկավարների և բնակիչների տրամադրած տեղեկությունների, ինչպես նաև տեղում կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ Վերին և Ներքին Շորժա, Այրը, Զաղացաձոր, Գեղամաբակ և տարածաշրջանի այլ գյուղական բնակավայրերում ջրից անվտանգ օգտվելու կենսական կարևոր նշանակություն ունեցող խնդիրներ են առաջացել։ Նշանակած խնդիրներուց է ոչ միայն ջրային պաշարների հասանելիության, այլ նաև անվտանգ և որակյալ ջրի նկատմամբ իրավունքի ապահովման տեսանկյունից։ Հատկանշական է, որ 2010 թվականի հուլիսի 28-ի թիվ 64/292 հանձնարարականով<sup>1</sup> ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից ճանաչվել է անվտանգ և մաքուր խմելու ջրի օգտագործման իրավունքը, որպես մարդու իրավունք, և ընդունվում է այն փաստը, որ ջրի ու սանիտացիայի հասանելիությունը հիմնարար է մարդու իրավունքների իրացման համար<sup>2</sup>։ Զուրը մարդու կյանքի և առողջության համար հիմնային նշանակություն ունեցող հանրային բարիք է։ Զուրը մարդու արժանապատիվ կյանքի իրավունքի իրացման անփոխարինելի գործոններից մեկն է<sup>3</sup>։ Զրի նկատմամբ մարդու իրավունքը ենթադրում է յուրաքանչյուր մարդու համար բավարար քանակությամբ անվտանգ, տնտեսապես և ֆիզիկապես հասանելի խմելու ջրի հասանելիությունը՝ նրա նվազագույն պահանջմունքների բավարարման համար։

<sup>1</sup> Տե՛ս United Nations General Assembly Resolution (64/292)

Հղումը <https://documents-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/N09/479/35/PDF/N0947935.pdf?OpenElement>

<sup>2</sup> Տե՛ս [https://www.un.org/waterforlifedecade/human\\_right\\_to\\_water.shtml](https://www.un.org/waterforlifedecade/human_right_to_water.shtml),

<sup>3</sup> Տե՛ս Տնտեսական, սոցիալայան և մշակութային իրավունքների կոմիտեի Գլխավոր մեկնաբանություններ No 15, Զրի իրավունք, E/C 12/2002/11 պար. 1:

24. Անդրադառնալով կոնկրետ դեպքերին՝ հարկ է արձանագրել, որ Վերին Շորժայի սարատեղիի բնակիչ Ա. Ա.-ն ահազանգել է, որ 2021 թվականի հունիսի 16-ին, ժամը՝ 05:30-ի սահմաններում ադրբեջանական զինծառայողները կրակել են սարատեղիում գտնվող իր կովի ու նոր ծնված հորթի ուղղությամբ և գողացել դրանք: Այնուհետև, նույն անձը նշել է, որ 2021 թվականի հունիսի 28-ին, ժամը՝ 17:00-ի սահմաններում ադրբեջանական զինծառայողները գողացել են նաև իր մի ոչխարն ու երկու գառը: Բացի այդ, Ա. Ա.-ն տեղեկացրել է, որ ադրբեջանական զինված ուժերը 2021 թվականի հուլիսի 23-ին, ժամը՝ մոտ 20:00-ից մինչև 00:30-ն ընկած հատվածում տարբեր տրամաչափի գենքերից ինտենսիվ կրակել են <<Գեղարքունիքի մարզի Վերին Շորժա գյուղի սարատեղի կոչվող հատվածին մոտ գտնվող հայկական զինված ուժերի դիրքերի, ինչպես նաև բնակավայրի ուղղությամբ: Ավելին, կրակոցների պատճառով միայն հաջորդ օրն առավոտյան՝ հուլիսի 24-ին, ժամը՝ 07:00-ի սահմաններում է հնարավորություն եղել դուրս գալ թաքստոցից:

**Այս ամենով հանդերձ՝ պետք է նկատել, որ մինչ օրս Ա.Ա.-ն չի ստացել պատշաճ փոխհատուցում կրած վնասների համար:**

25. Ներկայացված

տեղեկություններից զատ,



վկայակոչված բնակավայրերի բնակիչները նշում են, որ իրենց բնակավայրերի անմիջական հարևանությամբ ադրբեջանական զինծառայողների ներկայությունը, նրանց բացահայտ հանցավոր արարքները լրջորեն վտանգել են <<սահմանային գյուղերի բնակիչների կյանքն ու առողջությունը, ամբողջությամբ խաթարել նրանց բնականոն կյանքն ու հոգեկան անձեռնմխելիությունը: Ուշագրավ է հատկապես բնակիչներին հոգեբանական ճնշման մեջ պահելու կրկնվող վարքագիծը, որի մասին մարդիկ Պաշտպանին պատմել են գրեթե բոլոր սահմանամերձ բնակավայրերում: Մասնավորապես, Վերին Շորժայում, Ներքին Շորժայում, Նորաբակում, Կութում և Սոթքում բնակիչներն ահազանգել են այն մասին, որ գիշերային ժամերին

ադրբեջանական զինված ուժերը հեռահար լույսեր են միացնում տների ուղղությամբ, լուսատու փամփուշտներով կրակոցներ են արձակում: Ավելին՝ ողջ օրվա ընթացքում, այդ թվում՝ նաև գիշերային ժամերին, անօդաչու թռչող սարքերի միջոցով հիշյալ բնակավայրերի օդային տարածքները մշտադիտարկվում են ադրբեջանական զինված ուժերի կողմից: Նկարագրված գործողությունների արդյունքում հիշյալ բնակավայրերի բնակիչներն ահաբեկվում են, առաջանում է խուճապ:

26. 2022 թվականի ընթացքում, ինչպես 2021 թվականին, ադրբեջանական զինծառայողներն այրել են հարակից խոտհարքները և վարելահողերը: Այս ամենն ունի նաև պարբերական բնույթ, ինչի վկայումն է 2022 թվականին սեպտեմբերի 1-ին, 2-ին և 3-ին Վարդենիս համայնքի սահմանամերձ Նորաբակ և Ներքին Շորժայի բնակավայրերի մոտակա սարերում ադրբեջանական զինծառայողների կողմից իրենց դիրքերից այրվող անիվներ նետելը դեպի ցածրադիր բնակավայրեր, ինչի արդյունքում հրդեհ է բռնկվել: Դեպքի վայր է մեկնել Ահև ՓԾ մարզային փրկարարական վարչության հրշեց-փրկարարական ջոկատի օպերատիվ խումբը, որը ադրբեջանական զինծառայողների ուղիղ թիրախում փորձել է մարել կրակը<sup>4</sup>:

---

<sup>4</sup>Հղումը՝ <http://mes.am/hy/accidents/item/2022/09/01/1730/>

## Գլուխ 2. Նորաբակ բնակավայրում բարձրացված խնդիրների վերաբերյալ

27. Վարդենիս համայնքի սահմանամերձ Նորաբակ բնակավայր այցի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին Վարդենիս համայնքի ղեկավարը և հիշալ բնակավայրի վարչական ղեկավարը, ինչպես նաև բնակիչները տեղեկացրել են, որ ադրբեջանական զինծառայողները գտնվում են բնակավայրի մերձակայքում, ինչի հետևանքով գյուղացիները կարողանում են օգտվել իրենց պատկանող արոտավայրերի միայն մի փոքր հատվածից: Ավելին, ադրբեջանական զինծառայողները ահաբեկում են հովիվներին, բարձր բղավում և սպառնում զենքի ցուցադրմամբ, իրդեհած անիվներ են ուղղում դեպի գյուղացիների կենդանիները իրենց բարձրադիր դիրքերից՝ ձգտելով անընդհատ վախի մթնոլորտում պահել համայնքը:

28. Բացի ադրբեջանական անօրինական տեղակայումների հետևանքով պատճառված վնասից, Նորաբակ բնակավայրի բնակիչների հավաստմամբ՝ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող մնացած հողատարածքներից մի մասը տրամադրվել է այլ համայնքների բնակիչների (վարձակալությամբ իրավունքով), ինչի պատճառով ներկայում գյուղում բնակվող շատ գյուղացիներ չեն կարողանում մնացած հողատարածքներն օգտագործել և իրենց սեփական եկամուտը վաստակել իրենց գյուղում:

29. **Լուրջ խնդիր է շարունակում մնալ խմելու և ոռոգման ջրի հարցը:**

**Ադրբեջանական զինծառայողների տեղակայումները << ինքնիշխան տարածքում ազդել են նաև ջրավագաններին ու բնական աղբյուրներին բնակավայրերի**



**հասանելիության վրա:** Առանձին դեպքերում ադրբեջանական զինվորականների տիրապետության տակ են հայտնվել ջրավագաններն ու բնական աղբյուրները: Նորաբակում արձանագրվել է, որ գյուղին ջրով ապահովող բնական 6 աղբյուրներից 5-ը հիմա գտնվում են ադրբեջանական վերահսկողության տակ: Նրանց

վերահսկողության ներքո են նաև գյուղի ջրամատակարարման համար ծառայող ջրավազանը և շուրջ 2,5 կիլոմետր երկարությամբ ջրագիծը:

30. Ինչպես տեղեկացրել են Վարդենիսի համայնքապետարանի ներկայացուցիչները և բնակիչները, մինչև 2020 թվականի 44-օրյա պատերազմը նախատեսված է եղել Նորաբակում (Սոթքում և մի շարք այլ գյուղերում) լուծել ջրի խնդիրը՝ ջրավազանից ջրագծեր անցկացնելով, բայց աշխատանքներն ավարտին հնարավոր չի եղել հասցնել ադրբեջանական ներխուժումների պատճառով։ Նորաբակում մարդիկ իրենց տներում ջուր չունեն, ջուրն ընդամենը գյուղում չորս տեղ է, այն էլ ոչ լիարժեք է գալիս. այդտեղից գյուղի բնակիչները ստիպված են գրեթե ամեն օր դույլերով՝ ոտքով, մեքենայով կամ այլ հարմարանքներով խմելու և կենցաղային կարիքների համար ջուր տեղափոխել իրենց տներ։

31. Նորաբակ գյուղական բնակավայրի վարելահողերի, խոտհարքների և արոտավայրերի մեծ մասը գտնվում է ադրբեջանական զինծառայողների ապօրինի հսկողության տակ և բնակիչները զրկվել են դրանից օգտվելու հնարավորությունից։ Նորաբակի բնակիչների հավաստմամբ՝ իրենց հաշվարկով, զրկվել են նվազագույնը 1300 հա արոտավայրից, վարելահողից, խոտհարքից։ Բացի այդ, ևս 200 հա դարձել է անօգտագործելի. սրանք այն հողատարածքներն են, որոնք գտնվում են ադրբեջանական տեղակայումների հարևանությամբ, բայց մարդիկ չեն կարողանում օգտագործել, քանի որ դիտարկման տակ են և պարբերաբար կրակոցներ են արձակվում։ Այսինքն՝ գյուղի բնակիչները զրկվել են նշված տարածքների նկատմամբ իրենց սեփականության իրավունքի իրացման հնարավորությունից։

32. Նորաբակ գյուղական բնակավայրի կիսաքանդ անասնագումը (անասնատեղին) գտնվում է ադրբեջանական զինծառայողների ապօրինի հսկողության տակ և բնակիչները զրկվել են դրանից օգտվելու հնարավորությունից ևս։ Անասնագոմի մոտ կան առվակներ, որոնք նույնպես օգտագործվում էին գյուղատնտեսական նպատակներով, սակայն այժմ գյուղացիներն այլևս չեն կարողանում օգտվել դրանցից։

33. Հատկանշական է, որ ներկայացված տեղեկությունների համաձայն՝ Նորաբակում և մյուս սահմանամերձ բնակավայրերում մարդիկ նշել են, որ ստիպված են եղել վաճառել իրենց կենդանիները կամ դրանց մի մասը, քանի որ չեն կարողացել խոտի ձմեռվա անհրաժեշտ պաշար հավաքել։ Ինչի հետևանքով փաստացի զրկվել են իրենց համար միակ եկամտի աղբյուրից։

34. Բացի այդ, կատարված փաստահավաք աշխատանքների արդյունքում պարզվել է, որ ադրբեջանական զինծառայողներն իրենց անօրինական արարքներով ահաբեկում են բնակիչներին, մասնավորապես՝ ժամանակ առ ժամանակ կիրառում են տարբեր տրամաչափի գենքեր, որը պարզ լսելի է բնակավայրում, ավելին՝ գրեթե բոլոր համայնքներում մարդիկ նշել են, որ գիշերային ժամերին ադրբեջանական զինված ուժերը հեռահար ուժեղ լուսեր են միացնում գյուղացիների տների



պատուհանների ուղղությամբ՝ հոգեբանական լարվածություն ստեղծելու նպատակով։ Վերոգրյալն իր ուղղակի ազդեցությունն է ունենում անձանց իրավունքների իրացման վրա, քանի որ անմիջականորեն սպառնում է բավարար կենսամակարդակի բաղադրատարր հանդիսացող անվտանգությանը և ապահովությանը։

35. Ի հավելումն վերոգրյալի՝ փաստահավաք աշխատանքների արդյունքում պարզվել է, որ ադրբեջանական զինծառայողների կազմակերպած հրդեհների հետևանքով 2021 թվականի օգոստոսից սեպտեմբեր ամիսներին Նորաբակում այրվել է 20 հա արոտավայր և 10 հա խոտհարք։ Ըստ բնակիչների՝ ադրբեջանցի զինծառայողները հրդեհած անիվներն իրենց դիրքերի բարձրությունից բաց են թողնում հավաքված խոտի և արոտավայրի ուղղությամբ՝ միտումնավոր այրելով խոտը ու հրդեհելով արոտավայրերը։ Ավելին՝ հրդեհները տեղի են ունենում այնպիսի բարձրադիր վայրերում, որ մարդիկ հրշեց-փրկարար ծառայողների հետ միասին ստիպված նաև ծեռքով են մարում կրակը։ Ստացված ահազանգերի համաձայն՝ ադրբեջանական զինծառայողները 2021 թվականի սեպտեմբերի 4-ին կրկին հրդեհել են <<Գեղարքունիքի մարզի Ազատ գյուղի հարևանությամբ Նորաբակ գյուղից դեպի Ազատ տանող ճանապարհի մի հատվածը (ադրբեջանական դիրքի անմիջական հարևանությամբ)։ Ըստ ներկայացված տվյալների՝ այրվել է մոտ 40 հա արոտավայր։ Ադրբեջանական զինծառայողների հանցավոր արարքների պատճառով մարդիկ

զրկվել են ապրուստի միջոցից, ինչն էլ նպաստել է սոցիալական խնդիրների ավելացմանը:

### **Գլուխ 3. Կութանակավայրում բարձրացված խնդիրների վերաբերյալ**

36. Վարդենիս համայնքի ղեկավարը և Կութանակավայրի վարչական ղեկավարը, ինչպես նաև բնակիչներն այցի սկզբում **տեղեկացրել են, որ ադրբեջանական գինծառայողները տեղակայվել են բնակավայրին շատ մոտ, ինչի հետևանքով բնակիչները չեն կարողանում օգտագործել իրենց վարելահողերը, արոտավայրերը և խոտհարքները:** Գործնականում ծայրաստիճան դժվարացել իսկ որոշ դեպքերում անհնարին է դարձել սեփականության իրավունքի իրացումը:

37. Ադրբեջանական

գինծառայողները դրսենորում են անընդունելի պահվածք, զենքի ցուցադրմամբ սպառնալիքներ ներկայացնում գյուղացիներին, իրդեհվող անիվներ են բաց թողնում կենդանիների ուղղությամբ: Հիշալ բնակավայրին բավականին մոտ ադրբեջանական գինվորականների տեղակայման հետևանքով արոտավայրերի մի փոքր հատված է մնացել, որը հնարավոր է օգտագործել: Ավելին, պարբերաբար ադրբեջանական գինվորականները հովհանքներին հայիոյում են և բարձրաձայն սպառնում, երբ նրանք շարժվում են արոտավայրերի ադրբեջանական դիրքերի մոտակա հատվածների ուղղությամբ:

38. Կութանակավայրում ևս մարդիկ նշել են, որ ստիպված են եղել վաճառել իրենց կենդանիները կամ դրանց մի մասը, քանի որ չեն կարողանում խոտի ձմեռվա անհրաժեշտ պաշար հավաքել:

39. 2021 թվականի հունիսի 5-ին Կութանակավայրից ստացված ահազանգի համաձայն՝ ադրբեջանական գինված ուժերը կրակահերթ են արձակել Կութանակավայրից հովվի ուղղությամբ, որը տևել է մոտ 30 րոպե: Հովվի կարողացել է ձիով փախուստի դիմել, սակայն այդ ընթացքում կրակահերթից ձիու ոտքը վնասվել է: Ավելին, այդ ընթացքում ադրբեջանական գինվորականները գողացել են Կութանակավայրից պատկանող 80-ից ավելի եղջերավոր կենդանի, իսկ 4-ին՝ կրակահերթով սպառնել են:



40. Παշտպանի աշխատակազմի փաստահավաք աշխատանքների արդյունքում արձանագրվել է, որ մինչ օրս ադրբեջանական զինվորականների կողմից գողացված 80-ից ավելի եղերավոր կենդանի չեն վերադարձվել Կութայություն ունի բնակիչներին: Ինչը սոցիալական և կենսական կարևոր նշանակություն ունի բնակչության համար, քանի որ հիշյալ բնակավայրերում բնակիչների հիմնական գրաղմունքը և ապրուստի միջոցներից մեկն անասնապահություն է: **Հարկ է արձանագրել, որ ընտանիքները փոխհատուցում չեն ստացել:**

41. «Գեղարքունիքի մարզի սահմանամերձ բնակավայրեր կատարված այցերի ընթացքում բնակիչների կողմից բազմիցս բարձրացվել են ստացած վարկերի հետ կապված խնդիրներ, մասնավորապես՝ գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու համար տրամադրված վարկերը չեն կարողանում մարել ադրբեջանական ներխուժման հետևանքով զրկվել են իրենց եկամտի աղբյուրներից, սակայն դրանց համար տրամադրված վարկերի վճարումից չեն ազատվել, ինչպես նաև չեն տրամադրվել համարժեք փոխհատուցումներ:

42. Բարձրացված հարցի վերաբերյալ «*տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանն ուղղված Մարդու իրավունքների պաշտպանի գրությանն ի պատասխան՝ ի թիվս այլ տեղեկությունների, պարզաբանվել է, որ մի շաբթ քաղաքացիների տրամադրվել է դրամական աջակցություն (օրինակ՝ 150.000, 70.000, 50.000 «*դրամի չափով): Մինչդեռ, քաղաքացիների պնդմամբ՝ տրամադրված աջակցության գումարները բավարար չեն իրենց խնդիրները լուծելու համար, քանի որ վերջիններս ադրբեջանական ագրեսիայի հետևանքով կորցրել են եկամտի աղբյուրը, ինչի միջոցով իրենք կարող են վաստակել դրամական միջոցներ՝ ստանձնած վարկային պարտավորությունները մարելու, ինչպես նաև որոշակի եկամուտներ ստանալու համար: Վերջիններս խնդրել են աջակցություն վարկային պարտավորություններից ազատելու կամ կրած վնասները փոխհատուցելու հարցերում:**

43. Ի հավելումն վերոգրյալի, փաստահավաք աշխատանքների արդյունքում պարզվել է, որ ադրբեջանական զինծառայողները հրդեհներ իրականացնելու (տե՛ս [տեսանյութը](#)) հետևանքով 2021 թվականի օգոստոսից սեպտեմբեր ամիսներին Կուրե բնակավայրում այրվել է 150 հա արոտավայր և 60 հա խոտհարք: Ոչնչացվում է նաև խոտը, որ մարդիկ պաշարել են ձմռան համար: Ավելին՝ Կուրե բնակավայրի մեկ բնակիչ ահազանգել է Մարդու իրավունքների պաշտպանին՝ նշելով, որ մեծ նյութական վնաս է կրել, մասնավորապես՝ այրվել են խոտհարքները, հնձած խոտը, ինչպես նաև՝ խոտհնձիչը: Հրդեհներն իրական վտանգ են ներկայացնում քաղաքացիական



բնակչության կյանքի, վերջիններիս սեփականության համար (հրդեհներին ամենամոտը Կուրե գյուղն է): «  
**քաղաքացիական բնակչության դեմ ադրբեջանական զինված ուժերի արարքների ուսումնասիրությունը վկայում է, որ դրանք ուղղված են եղել մարդկանց վնաս պատճառելուն, իսկ իրավունքների խախտումները կրել են զանգվածային բնույթ՝ այդպիսով վերջնարդյունքում նպատակ հետապնդելով մարդկանց դրդել**

**լքել իրենց բնակավայրերը:**

#### **Գլուխ 4. Սոթք բնակավայրում բարձրացված խնդիրների վերաբերյալ**

44. Վարդենիս համայնքի սահմանամերձ Սոթք բնակավայր այցի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին Վարդենիս համայնքի ղեկավարը և վարչական ղեկավարը, ինչպես նաև բնակիչները տեղեկացրել են, որ ադրբեջանական **գինծառայողները գտնվում են բնակավայրի մերձակայքում, ինչի հետևանքով գյուղացիները զրկվել են արոտավայրերի մի մասից: Ավելին, ադրբեջանական գինուժը պարբերաբար անօդաչու թռչող սարքերի կիրառմամբ ահաբեկում է գյուղացիներին:**



45. 2020 թվականից Սոթք բնակավայրի խմելու ջրագծի կառուցման սուբվենցիոն ծրագիրը մնացել է անավարտ, քանի որ **ջրահավաք ավագանը հայտնվել է Ադրբեջանի գինված ուժերի նշանառության տակ**, ինչի հետևանքով շինարարն անվտանգության նկատառումներից ելնելով՝ չի կարողանում ավարտել սկսած ծրագիրը: Սոթք բնակավայրում մինչ օրս մասամբ պահպանվում է խմելու ջրի խնդիրը:

46. Սոթք բնակավայրի հիմնական գրաղմունքներն են՝ հողագործությունը, անասնապահությունը, սակայն ներկայում բնակիչների համար խնդրահարույց է դարձել իրենց բնակավայրերում հողագործությամբ և անասնապահությամբ գրաղվելը:

47. Բնակավայրի տարածքում «Գեղարումայնինգ Գոլդ» ընկերության կողմից շահագործվում է Սոթքի ուսկու հանքավայրը, որտեղ մինչև պատերազմն աշխատել է մոտ 1542 աշխատող (մոտ 985-Սոթք, մոտ 500-Արարատ, 57-Երևան), ավելին՝ ընկերությունը Հայաստանի Հանրապետության խոշոր հարկ վճարողների ցանկում գրաղեցրել է 4-րդ հորիզոնականը: Սակայն Ադրբեջանի Հանրապետության գինված ուժերի կողմից 2020 թվականի նոյեմբերի 26-ին Սոթքի հանքավայրի տարածքում տեղակայվելու հետևանքով հանքի տարածքի մեծ մասն անցել է Ադրբեջանի վերահսկողության տակ, ինչի արդյունքում խնդիրներ են առաջացել հանքանյութի դուրսբերման հետ կապված: Արդյունքում ընկերության աշխատանքային ծավալները երեք անգամ կրճատվել են: Ավելին՝ աշխատանքային ծավալների կրճատման պատճառով աշխատողների մեծ մասն ազատվել է, իսկ մյուս մասի աշխատավարձերն

Էականորեն նվազել են: Սոթք համայնքի բնակիչների մեծ մասն աշխատել է հանքում, որի աշխատանքի ծավալների կրճատման պատճառով աշխատակիցների մի մասը կրճատվել է:

48. **Դրանից բացի**, 2021 թվականի ընթացքում **Պաշտպանի աշխատակազմ** ստացվել են ահազանգեր, որ ադրբեջանական զինուժը կրակել է տարբեր տրամաչափի զինատեսակներից ինչպես հայկական զինված ուժերի դիրքերի, այնպես էլ Սոթքի հանքավայրի ուղղությամբ, ինչի պատճառով, երբեմն, խաթարվել է Սոթքի ոսկու հանքավայրի աշխատանքը, խախտվել են աշխատողների իրավունքները: **Հրատապ տարհանվել են հանքավայրի աշխատողները:**

49. Սոթք բնակավայրի բնակիչները հայտնել են, որ վտանգվել է իրենց ֆիզիկական անվտանգությունը, զրկվել են արոտավայրերը օգտագործելու հնարավորությունից:

50. Ի հավելումն վերոգրյալի, փաստահավաք աշխատանքների արդյունքում պարզվել է, որ ադրբեջանական զինծառայողների կողմից հրդեհների կազմակերպման հետևանքով 2021 թվականի օգոստոսից սեպտեմբեր ամիսներին Սոթքում այրվել է 80 հա արոտավայր և 70 հա խոտհարք:

## IV. ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՅՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

### Գլուխ 1. Անվտանգային հարցերի վերաբերյալ

51. Մշտադիտարկված բոլոր գյուղերում բնակչիների համար կարևորագույն խնդիր է անվտանգության ապահովումը և անվտանգային հարցերի հետ կապված հստակ տեղեկությունների բացակայությունը, ինչն ուղղակիորեն կամ անուղղակի կերպով փոխկապակցված է նաև այցերի ընթացքում արձանագրված մի շարք այլ խնդիրների հետ: Այսպես, գրեթե բոլոր գյուղերը, որտեղ Պաշտպանի աշխատակազմն իրականացրել է մշտադիտարկման այցեր, գտնվում են ադրբեջանական ուժերի ուղիղ նշանառության տակ կամ դիտարկվում են վերջիններիս կողմից:

52. Հատկապես մտահոգիչ է այն, որ ուղիղ նշանառության տակ են գրեթե բոլոր գյուղերի մանկապարտեզներն ու դպրոցները, ինչի հետևանքով մշտադիտարկված դպրոցներից որոշներում վերջին 5 տարիների ընթացքում արձանագրվել են կրակոցներից ապակիների և պատերի վնասված լինելու դեպքեր: Օրինակ, Չինարի գյուղում ուղիղ նշանառության տակ է գտնվում գյուղի միջնակարգ դպրոցը և մանկապարտեզը: Մանկապարտեզի տնօրենի կողմից տրամադրված տեղեկության համաձայն՝ սույն թվականի փետրվար ամսին մանկապարտեզի ուղղությամբ եղել են կրակոցներ, որի հետևանքով վնասվել են պատուհանների ապակիները, ինչպես նաև պատերը (տե՛ս հավելվածի նկարներ 1-3): Ավելին, ըստ տրամադրված տեղեկությունների՝ ադրբեջանական զինծառայողները 2 շաբաթը մեկ անգամ՝ մարտական հերթապահության հերթափոխ իրականացնելու օրերին (հինգշաբթի օրերին) կրակոցներ են արձակում հայկական դիրքերի ուղղությամբ, ինչի արդյունքում գնդակները հաճախ հայտնվում են գյուղի մշակովի այգիներում:

53. Այս կապակցությամբ Մարդու իրավունքների պաշտպանը ևս մեկ անգամ վերահստատում է, որ անհրաժեշտ է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ քայլերն առաջնային կարգով ապահովելու ուղիղ նշանառության տակ գտնվող դպրոցների, մանկապարտեզների անվտանգությունը՝ ներդնելով քողարկման, անվտանգային կամ պաշտպանական բավարար միջոցներ, ինչպես նաև համապատասխան վայրերում՝ տեսանելի տարածքներում տեղադրելով հնարավոր վտանգի մասին զգուշացնող նշաններ և կանոնավոր կերպով իրականացնելով իրազեկման արշավներ:

54. Անվտանգային մտահոգությամբ պայմանավորված, ինչպես նաև արոտավայրերի զգալի հատվածի՝ ադրբեջանական ուժերի ուղիղ նշանառության տակ

գտնվելու հետևանքով մշտադիտարկված որոշ գյուղերում, օրինակ՝ Ազատամուտում, բնակիչներից շատերը ստիպված են եղել կրճատել իրենց խոշոր և մանր եղջերավոր անասունների քանակը, ինչն էականորեն նվազեցրել է բնակիչների ապրուստի միջոցները: Օրինակ՝ մի դեպքում ընտանիքը 30 խոշոր եղջերավորից պահել է 10-ը, մեկ այլ դեպքում՝ անձը շուկայականից ցածր գնով, որպես մսացու, վաճառել է իր անասունները, քանի որ չի կարողացել ձմռան համար բավարար անասնակեր պահեստավորել: Առանձնազրույցների ընթացքում, օրինակ, Այգեպար գյուղում, բնակիչներից ոմանք որպես առկա խնդիրների հիմնական պատճառ նշել են սահմանազատման գործնթացի անորոշությունը, ինչով պայմանավորված, ըստ իրենց, հնարավոր չէ լուծել համայնքի խնդիրները, օրինակ, ջրագծի անցկացման հարցը:

55. Այս կապակցությամբ **Պաշտպանը** կարևոր է համարում պետության կողմից կանոնավոր, հստակ և մատչելի հանրային հաղորդակցության վարումը, հատկապես սահմանամերձ գյուղերի բնակիչների հետ: Հարկ է արձանագրել, որ անձանց տեղեկացված լինելու իրավունքը պետք է ապահովվի, հատկապես նկատի ունենալով, որ սահմանազատման ու սահմանագծման գործնթացը երկարատև է, ուստի, անձանց կենսական նշանակության հարցերի լուծումը չպետք է առկախվի սահմանազատման գործնթացով պայմանավորված:

56. **Պաշտպանն** այս առումով մի շարք համայնքներում բնակիչներին կոչ է արել չառկախել իրենց համայնքի կենսագործունեության կազմակերպման որոշումներն այդ գործնթացով, այլ առավել ակտիվ առաջարկություններ ներկայացնել խոշորացված համայնքներին՝ իրենց համայնքի այս կամ այն խնդիրը լուծելու վերաբերյալ: **Իրենց համայնքին, ինչպես նաև՝ կյանքին և անվտանգությանը վերաբերող տեղեկություններ ստանալու իրավունքը մարդկանց սահմանադրական իրավունքն է, և պետությունն այս հարցում ունի պողիտիվ պարտավորություն:**

57. Նշվածի կարևորությունը հատկապես ընդգծվում է նկատի ունենալով այն, որ առկա է ներքին և արտաքին ապատեղեկատվություն, ուստի պետությունը՝ ի դեմս տարածքային կառավարման մարմինների ու տեղական ինքնակառավարման մարմինների, պարտավոր է սահմանամերձ գյուղերի բնակիչների համար ապահովել հստակ և կանոնավոր տեղեկության տրամադրումը՝ նպաստելով վերջիններիս մոտ անվտանգության և կայունության մթնոլորտի ձևավորմանը:

58. Մշտադիտարկված գրեթե բոլոր մանկապարտեզներում և դպրոցներում արձանագրվել է սահմանված նորմերին համապատասխանող և անհրաժեշտ գույքով կահավորված ապաստարանների բացակայության խնդիրը: Որոշ դեպքերում ապաստարանների փոխարեն Կարմիր Խաչի աջակցությամբ որպես թաքստոց կառուցված են եղել «ապահով սենյակներ», որոնց կահավորումն ու առկա վիճակն այցերի պահին բավարար չի եղել ցանկացած պահի հրատապ կերպով սենյակն ըստ նպատակի օգտագործելու համար (տե՛ս հավելվածի նկարներ 4-7):

59. Մեկ այլ դեպքում՝ Չինարի գյուղում մանկապարտեզը 3 կողմից գտնվում է ադրբեջանական զինված ուժերի ուղիղ նշանառության տակ, սակայն ապաստարան առկա չէ: Բակում շուրջ 10 տարի առաջ Կարմիր Խաչի կողմից կառուցված ապաստարանը կարճ ժամանակում փլվել է, ինչի հետևանքով այցի պահին որպես թաքստոց ծառայում է համեմատաբար ապահով թվով մեկ սենյակ՝ բարձրացված պատուհաններով, որի մակերեսը բավարար չէ բոլոր երեխաներին և աշխատակիցներին տեղավորելու համար: Ըստ տրամադրված տեղեկությունների՝ Արտակարգ իրավիճակների նախարարության կողմից կազմվել է տարհանման պլան, սակայն երբեմն պարապմունքներ չեն իրականացվել. Ահեն աշխատակիցների կողմից հիմնականում անցկացվել են ընդհանուր զրույցներ: Այցերի ընթացքում գրեթե բոլոր մանկապարտեզների և դպրոցների տնօրենների, ինչպես նաև այլ աշխատակիցների հետ հանդիպումների, քննարկումների արդյունքում արձանագրվել է հաստատությունների անձնակազմի համար կանոնավոր, թիրախային վերապատրաստումների իրականացման անհրաժեշտությունը՝ միտված ճգնաժամային իրավիճակներում կիրառելի գործնական հմտությունների զարգացմանը, ինչպես նաև քաղաքացիական պաշտպանության պլանով տարհանում իրականացնելուն, երեխաների՝ ապաստարանում, թաքստոցում գտնվելն անվտանգ և հնարավոր սթրեսներից զերծ կազմակերպելուն:

60. Այսպիսով, Պաշտպանն առանձնահատուկ կարևորում է ապաստարանների, թաքստոցների կահավորման, ֆիզիկական վիճակի՝ սահմանված նորմերին համապատասխան ապահովումը: Սա առաջնային կարևորություն ունի սահմանամերձ գյուղերի բնակիչների անվտանգության երաշխավորման, նրանց մոտ անվտանգության զգացողության ծևավորման համար: **Ընդ որում՝ այս համատեքստում պետության պողիտիվ պարտավորության պատշաճ կատարումը պահանջում է, որ**

անվտանգային նկատառումներով իրականացվող վերապատրաստումներն ու վարժանքները լինեն հաճախակի և կանոնավոր, չկրեն ձևական բնույթ, ներգրավեն համայնքի բոլոր բնակիչներին, իրականացվեն ամբողջ ծավալով՝ չսահմանափակվելով միայն դպրոցների կամ մանկապարտեզների, այլև ամբողջ համայնքի տարիանման պլաններով:

## **Գլուխ 2. Խմելու ջրի հասանելիության խնդրի վերաբերյալ**

61. Մշտադիտարկված գրեթե բոլոր գյուղերում արձանագրվել է խմելու ջրի հասանելիության խնդիր: Օրինակ՝ Բերքաբեր գյուղում առկա չէ խմելու ջրի մատակարարման ներքին ցանց: Արդյունքում բնակիչները ստիպված են խմելու և խոհանոցում օգտագործելու նպատակով ջուրը տուն հասցնել տարաներով՝ օգտվելով գյուղի աղբյուրներից: Մեկ այլ գյուղում՝ Բարեկամավանում, ըստ ներկայացված տեղեկությունների, խմելու ջուրը մատակարարվում է շաբաթական մեկ անգամ՝ երկու ժամով: Բնակիչների տեղեկությունների համաձայն՝ Սարիգյուղում խմելու ջուրը մատակարարվում է երկու շաբաթը մեկ անգամ: Ըստ համայնքապետարանի ներկայացուցչի տեղեկությունների՝ ընթացիկ աշխատանքներ են իրականացվում խմելու ջրի խնդրի կարգավորման ուղղությամբ (Բերքաբեր գյուղի ջրամբարի պոմպակայանի կառուցման միջոցով), ինչի արդյունքում ակնկալվում է, որ գյուղը շուրջ 80 տոկոսով կապահովվի խմելու ջրով: Ազատամուտ գյուղում, ըստ համայնքապետարանի տրամադրած տեղեկությունների, խմելու ջուրը մատակարարվում է օրական մեկ անգամ՝ 3-4 ժամով, սակայն ամառվա ամիսներին ջրի պաշարները նվազում են, ինչն ազդում է ջրի մատակարարման վրա: Մինչդեռ առանձնազրույցների ընթացքում որոշ բնակիչների պնդմամբ՝ խմելու ջուր ամեն օր չի մատակարարվում, իսկ մատակարարման դեպքում օրական երկու ժամով՝ 18:00-20:00-ն ընկած ժամանակահատվածում, այն էլ՝ անորակ, քանի որ երբեմն անհրաժեշտ է լինում նախքան խմելը եռացնել ջուրը: Կիրանց գյուղում, ըստ բնակիչների, խմելու ջուրը մատակարարվում է օրական մեկ անգամ՝ երկու ժամով՝ 07:00-09:00-ն ընկած ժամանակահատվածում: Համայնքի ղեկավարը խոշորացված համայնքին ներկայացրել է գյուղում 5 կմ երկարությամբ խմելու ջրի ներքին ցանցի վերանորոգման և ջրաչափերի տեղադրման հարցը, սակայն խնդրի կարգավորման վերաբերյալ այցի օրվա դրությամբ հստակ տեղեկատվություն առկա չի եղել: Բնակիչների տեղեկությունների համաձայն՝ Ներքին Կարմիրաղբյուր գյուղում խմելու ջուրը մատակարարվում է երեք ժամով՝ 07:00-10:00-ն, Մովսեսում՝ երեք օրը մեկ անգամ, Նորաշենում՝ խմելու ջուրը մատակարարվում է օրական կամ երկու օրը մեկ անգամ, Այգեծորում խմելու ջուրը մատակարարվում է երկու կամ երեք օրը մեկ անգամ մեկից երկու ժամով, Արծվաբերդում՝ չորս օրը մեկ անգամ՝ մեկ ժամով:

62. Այսի օրվա դրությամբ խմելու ջրի խնդիր է արձանագրվել նաև Բաղանիս գյուղում, ինչը, ըստ համայնքապետարանի ներկայացուցչի տեղեկությունների, պետք է կարգավորվի մինչև օգոստոս ամսվա վերջ՝ «Հայաստան» համահայկական հիմնադրամի աջակցությամբ գյուղում ներքին ջրամատակարարման ցանցի կառուցման արդյունքում: Համայնքի բնակիչների տեղեկությունների համաձայն՝ համայնքի պատասխանատուները վստահեցրել են, որ մինչև սեպտեմբեր աշխատանքներն ավարտին կհասցվեն, կտեղադրվեն ջրաչափեր և գյուղը կապահովվի խմելու ջրի շուրջօրյա մատակարարմամբ:

63. Հավաքագրված տեղեկությունների համաձայն՝ Զինարի գյուղում խմելու ջուր մատակարարվում է երկու օրը մեկ անգամ, մեկ ժամով, իսկ ջրի ցածր ճնշման հետևանքով, որոշ թաղամասեր զրկված են նույնիսկ երկու օրը մեկ անգամ խմելու ջուր ունենալու հնարավորությունից:

64. Արձանագրվել է նաև, որ խմելու ջրի մատակարարմանը լրացուցիչ խոչընդուն է հանդիսանում նաև խողովակների, ջրամատակարարման ներքին ցանցի անսարքությունները, որոնք ունեն հիմնովին վերանորոգման անհրաժեշտություն: Օրինակ, Կոթի գյուղի համայնքապետարանի տեղեկությունների համաձայն, նշված խնդրի հետևանքով առհասարակ հնարավոր չի լինում որոշ ընտանիքներին խմելու ջուր մատակարարել:

65. Ուկեպար գյուղում խմելու ջուր բնակիչներին մատակարարվում է օրական 1-1.5 ժամ տևողությամբ, ինչը բավարար չէ կենսական նվազագույն կարիքները հոգալու համար: Բնակիչների պնդմամբ՝ գյուղին մերձակա հատվածում կա «Ղարասու» կոչվող աղբյուր, որտեղից գյուղ ջուր հասցնելու դեպքում բնակիչները կապահովվեն խմելու ջրի շուրջօրյա մատակարարմամբ: Ուկեպարի վարչական ղեկավարի տեղեկությունների համաձայն՝ 400 մետր երկարությամբ խմելու ջրի ներքին ցանցի կառուցման հայտ է ներկայացվել իրավասու մարմիններին և ըստ վերջիններիս հավաստիացումների՝ աշխատանքների իրականացումն ընդգրկված է 2022 թվականի ծրագրերում:

66. Տրամադրած տեղեկությունների համաձայն, 2015-2016 թվականներին Կոթի գյուղի ողջ տարածքում խմելու ջրի ներքին ցանց է կառուցվել, սակայն շինարարության վատ որակի հետևանքով շատ բաժանորդների ջրամատակարարումը չի ապահովվում: Այսի ընթացքում բարձրացվել է նաև խմելու ջրի ծավալի հարցը, քանի որ

մատակարարումն իրականացվում է երկու օրը մեկ անգամ՝ մեկ ժամով: Բնակիչները հիմնականում օգտվում են գյուղի տարածքում գտնվող աղբյուրից և արտեզյան հորից:

67. Այս կապակցությամբ Պաշտպանը վերահաստատում է այն դիրքորոշումը, որ պետությունը իրատապության կարգով պետք է ապահովի սահմանամերձ գյուղերի խմելու ջրի հասանելիությունը՝ արժանապատիվ և մատչելի եղանակով: Այս առումով հատկապես կարևոր է սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում ջրամատակարարման հարցը որպես առաջնահերթություն սահմանելու մոտեցումը: Անհրաժեշտ է նաև տեխնիկական ու խորհրդատվական աջակցություն տրամադրել համայնքներին՝ իրենց կարիքները սուբվենցիոն ծրագրերով ըստ արժանվույն ներկայացնելու համար: Այս կարիքը հաստատվել է գրեթե բոլոր համայնքներում, որոնք հիմնականում նվազ կարողություն ունեն հաշվարկների ու համայնքի առաջարկները ձևակերպելու առումով:

### **Գլուխ 3. Ոռոգման ջրի հասանելիության խնդրի վերաբերյալ**

68. Ոռոգման ջրի հասանելիության հետ կապված համակարգային խնդիր է արձանագրվել մշտադիտարկված գրեթե բոլոր գյուղերում, օրինակ, Արծվաբերդ, Չորաթան, Չինարի, Այգեձոր, Ազատամուտ, Ներքին Կարմիրաղբյուր, Մովսես, Նորաշեն, Սարիգյուղ, Կոթի գյուղերում: Այս խնդիրը հատկապես մտահոգիչ է այն պատճառով, որ այն ուղղակիորեն բացասական ազդեցություն է ունենում բնակիչների սոցիալական վիճակի վրա, քանի որ որոշ համայնքներում վերջիններիս եկամտի հիմնական, որոշ դեպքերում էլ՝ միակ աղբյուրը այգեգործությունն ու բանջարաբուտանային կուլտուրաների արտադրությունն է: Այսպես, Մովսես գյուղում բնակիչներն իրենց դժգոհությունն են հայտնել այն հարցի կապակցությամբ, որ գյուղի ոռոգման ջրի հիմնական աղբյուր հանդիսացող գետի մեծ մասն ադրբեջանական ուժերի վերահսկողության ներքո է, իսկ ոռոգման ջրագծի բացակայության պատճառով չեն կարողանում բավարար քանակի ոռոգման ջուր ստանալ իրենց եկամտի աղբյուրն ապահովող աշխատանքների իրականացման համար: Արդյունքում՝ ոռոգման ջրի բացակայության պատճառով բնակիչների պտղատու ծառերը չորանում են կամ էլ վերջիններս գրկվում են իրենց եկամտի հիմնական աղբյուր հանդիսացող այլ գյուղատնտեսական աշխատանքներ կատարելու հնարավորությունից: Օրինակ՝ բնակիչներից մեկը շուրջ մեկ տարի զբաղվել է ազնվամորու մշակմամբ, սակայն ոռոգման ջրի ոչ բավարար լինելու պատճառով ստիպված դադարեցրել է այն:

69. Ներքին Կարմիրաղբյուր գյուղում, ըստ բնակիչների, ոռոգման ջրի հետ կապված խնդիրը պետք է լուծում ստանար մեկ տարի առաջ՝ «Հայաստան» համահայկական հիմնադրամի աջակցությամբ, լճից պետք է ջուր մատակարարվեր, սակայն համայնքի համար անհասկանալի պատճառներով անհրաժեշտ աշխատանքները չեն կատարվել:

70. Մշտադիտարկման ընթացքում արձանագրվել է, որ Նորաշենում ոռոգման համակարգ ընդհանրապես առկա չէ:

71. Ազատամուտ գյուղի բնակիչների տեղեկացմամբ՝ ոռոգման ջրի հասանելիության ապահովման հետ կապված քննարկումներ են տեղի ունեցել Աղստև գետից դեպի գյուղ ջրագիծ կառուցելու վերաբերյալ, սակայն չի կառուցվել: Համայնքապետարանի ներկայացուցչի պարզաբանումների համաձայն՝ Ազատամուտում ոռոգման ջրի խնդիրը պայմանավորված է հատկապես այն

հանգամանքով, որ վարչական շրջանը գյուղատնտեսական նշանակության հող չունի, ինչի հետևանքով հնարավոր չէ ապահովել ոռոգման ջրի համար սահմանված իրավակարգավորումների պահանջները, իսկ բնակիչների կողմից փաստացի օգտագործվող գյուղատնտեսական հողերը, արոտավայրերն ու վարելահողերը կադաստրային քարտեզներում որևէ կերպ արտացոլված չեն: Խնդրի կապակցությամբ համայնքապետարանը շուրջ 3 տարի առաջ դիմել է << կառավարությանը, սակայն դրական լուծում չի ստացել:

72. Մեկ այլ դեպքում՝ Ոսկեպար գյուղում բնակիչները նշել են, որ գյուղն ունի վարելահողեր և այգեգործության համար նպաստավոր հողեր, սակայն ոռոգման ջրի բացակայության պատճառով դրանք տարիներ շարունակ չեն օգտագործվում: Մյուս կողմից՝ անձանց պատկանող հողատարածքներն ունեն փոքր մակերես՝ շուրջ 500 մ/ք և գտնվում են միմյանցից մի քանի կիլոմետր հեռավորության վրա: Այսինքն՝ անձը գյուղի տարածքում ունի միմյանցից բավական մեծ հեռավորության վրա գտնվող մի քանի փոքր հողատարածք: Ուստի՝ նույնիսկ ոռոգման ջրի խնդրի լուծման դեպքում դրանց օգտագործումը նպատակահարմար չի լինի: Սա է պատճառը, որ թեև այսօր համայնքն ունի հացահատիկ հավաքող կոմբայն, սակայն գյուղում ցանքս չի իրականացվում: Բնակիչների պնդմամբ՝ խնդրի լուծում կարող է հանդիսանալ հողերի միավորումը, խոշորացումը, ինչը կնպաստի նաև ոռոգման ջրի խնդրի արդյունավետ համակարգային լուծումը:

73. Կորթի գյուղում համայնքի ղեկավարի պնդմամբ՝ օգոստոս ամսին ոռոգման ջուր առհասարակ չի լինում, սակայն խնդրի լուծումը հնարավորություն կտա մշակել 315-ից 320 հա հողատարածք:

74. Հարկ է նշել, որ ջրամատակարարման խնդիրն առաջնային է նաև այն իմաստով, որ կառավարության կողմից սահմանամերձ համայնքների համար տարբեր աջակցության ծրագրերն ու արտոնություններն ունեն գյուղատնտեսությունը խթանելու բնույթ, իսկ առանց ոռոգման ջրի հասանելիության, նման ծրագրերի արդյունավետությունը, առնվազն, ցանկալի մակարդակ չի կարող ապահովել:

75. Հարցի կարգավորման նպատակով կարևոր է նաև սուբվենցիոն ծրագրերի խթանումը և ընդլայնումը, ինչի կապակցությամբ այցերի ընթացքում արձանագրվել են նաև միջգերատեսչական, միջհամայնքային մարմինների համագործակցության հետ կապված խնդիրներ, ինչպես նաև սուբվենցիոն ծրագրեր ներկայացնելու ժամկետների

և կարգի վերաբերյալ իրազեկման խնդիրներ, որոնցով պայմանավորված որոշ համայնքներ գործնականում զրկվել են սուբվենցիոն ծրագրեր ներկայացնելու հնարավորությունից: Այս հարցում անհրաժեշտ է հատկապես տարածքային կառավարման մարմինների, խոշորացված համայնքների ինքնակառավարման մարմինների կողմից սահմանամերձ բնակավայրերին ժամանակին, հստակ և պատշաճ տեղեկատվության տրամադրումը, իրազեկումը և ծրագրերի մշակման հարցում մասնագիտական աջակցության ցուցաբերումը:

#### **Գլուխ 4. Գաղի մատակարարման խնդրի վերաբերյալ**

76. Մշտադիտարկման արդյունքում արձանագրվել է, որ որոշ բնակավայրերում առկա է գաղի մատակարման խնդիր: Օրինակ՝ Կիրանց գյուղում համայնքապետի տեղեկությունների համաձայն գաղ չի մատակարարվում, քանի որ բաժանորդների թիվը քիչ է, ուստի՝ գաղափիկացումը ֆինանսապես նպատակահարմար չէ: Գաղափիկացման խնդրի լուծման նպատակով համայնքի ղեկավարը հայտ է ներկայացրել իրավասու մարմիններին հարցը խոշորացված համայնքի զարգացման 5-ամյա ծրագրում ընդգրկելու համար:

77. Այս կապակցությամբ պետք է ընդգծել, որ պետության կողմից պետք է ձեռնարկվեն հավելյալ ջանքեր՝ երաշխավորելու, որ հանրային ծառայությունները հասանելի լինեն յուրաքանչյուր համայնքում՝ անկախ բնակավայրի հեռավորությունից կամ համայնքի բնակիչների թվից: Այս խնդիրն առավել կարևոր է դառնում նաև սահմանամերձ համայնքներում բնակչության թվի կայունությունն ապահովելու առումով:

## **Գլուխ 5. Բնակիչների զբաղվածության ապահովման և սոցիալական բնույթի այլ խնդիրների վերաբերյալ**

78. Մշտադիտարկված գրեթե բոլոր գյուղերում լրջագույն խնդիր է բնակիչների զբաղվածության ապահովման հարցը: Այսպես, Այգեպար գյուղում առանձնազրույցների ընթացքում որոշ բնակիչների կողմից բարձրացվել է աշխատատեղերի բացակայության հարցը՝ նշելով, որ բնակիչներից շատերի եկամտի աղբյուրը պետության կողմից վճարվող նպաստներն ու թոշակներն են, ինչը բավարար չէ արժանապատիվ կյանքի նվազագույն պայմաններն ապահովելու համար: **Խնդիրն էլ ավելի է սրվում հատկապես անվտանգային հարցերի պատճառով:** Հատկապես այն գյուղերում, որտեղ արոտավայրերը, վարելահողները կամ այգիները գտնվում են ադրբեջանական դիրքերի ուղիղ նշանառության տակ (դիտարկված գյուղերում՝ նվազագույնը 500 մետր, առավելագույնը՝ 1.8-2 կմ) կամ պաշտոնական հստակ տեղեկությունների բացակայության պատճառով բնակիչների մոտ ձևավորվել է տպավորություն, որ իրենց եկամտի հիմնական աղբյուր հանդիսացող վարելահողերը կամ այգիները կարող են մնալ ադրբեջանական զինված ուժերի վերահսկողության տակ: Օրինակ, Չորաթան գյուղում, ըստ տրամադրված տեղեկությունների, մշակովի այգիները գտնվում են հակառակորդի զինված ուժերի ուղիղ նշանառության տակ և գյուղատնտեսական աշխատանքներ իրականացնելիս պարբերաբար կրակոցներ են արձակվում մարդկանց ուղղությամբ: Այցերի ընթացքում պարզվեց, որ այդ հատվածում վերջին անգամ կրակոցներ են արձակվել Պաշտպանի ներկայացուցիչների այցին նախորդող շաբաթվա ընթացքում: Վերջին ամիսներին արձանագրվել է դեպք, երբ փամփուշտը դիպել է այգում աշխատանքներ կատարող անձի անմիջական հարևանությամբ դրված արկղին: Ըստ բնակիչների պնդումների՝ ադրբեջանական զինված ծառայողները ցանկացած պահի կարող են թիրախավորել և վնասել կամ կյանքից գրկել այգիներում գտնվող ցանկացած անձի, սակայն միտումնավոր են շեղ հարվածում՝ նպատակ ունենալով առաջացնել վախի մթնոլորտ, ահաբեկել և խուճապ տարածել բնակչության շրջանում:

79. Այս կապակցությամբ Պաշտպանը հատուկ ընդգծում է, որ սահմանամերձ համայնքներում զբաղվածության խնդրի կարգավորումը կարևորագույն նշանակություն ունի ոչ միայն մարդկանց սոցիալական իրավունքների երաշխավորման

և կենսապայմանների բարելավման տեսանկյունից, այլ առհասարակ անվտանգության համատեքստում:

80. Որոշ գյուղերում բնակիչներն իրենց մտահոգությունն են հայտնել յուրաքանչյուր ընտանիքի տարեկան 8 մ/խ փայտ հավաքելու թույլտվության տրամադրման գործող իրավակարգավորումների վերաբերյալ: Օրինակ՝ Ոսկեպարում, Կիրանցում, Բերքաբերում բնակիչները հայտնել են, որ թույլտվությամբ նշվում է անտառի այն հատվածը, որտեղից կարելի է փայտ հավաքել, իսկ դրանք գործնականում այն հատվածներն են, որտեղ բեռնատար մեքենա մոտեցնել հնարավոր չէ, ինչի հետևանքով թույլտվությունից օգտվելը որոշ դեպքերում դառնում է առհասարակ անհնար, որոշ դեպքերում էլ՝ պահանջում է լրացուցիչ ֆինանսական միջոցները, ինչն արդարացված չէ նման սոցիալական պայմաններում:

## **Գլուխ 6. Ուսումնական հաստատությունների շենքային պայմանների և կրթության իրավունքի իրացման վերաբերյալ**

81. Մշտադիտարկման ընթացքում այցեր կատարած գյուղերի նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատություններում վեր են հանվել որոշ հաստատությունների շենքային պայմանների հետ կապված խնդիրներ: Միաժամանակ, արձանագրվել են նաև կրթության որակի և հասանելիության համակարգային խնդիրներ:

82. Մասնավորապես, որոշ դեպքերում խնդրահարույց է ուսումնական հաստատությունների շենքային պայմանների հարցը: Օրինակ՝ Ուկեպար գյուղի միջնակարգ դպրոցի շենքի ամբողջ տանիքը (900մ/ք) վերանորոգման կարիք ունի: Դպրոցի տնօրենի տեղեկությունների համաձայն՝ Կարմիր Խաչի և բարերարների աջակցությամբ ձեռք են բերվել վերանորոգման համար անհրաժեշտ նյութերը, որից հետո վերջինս դիմել է իրավասու մարմիններին՝ վերանորոգման աշխատանքների կատարման հարցում աջակցելու նպատակով, ինչի համար, ըստ տնօրենի, անհրաժեշտ կլինի շուրջ 6 մլն << դրամ: Մշտադիտարկման այցի օրվա դրությամբ բարձրացված հարցի կապակցությամբ պետության կողմից դրական պատասխան չի ստացվել: Արդյունքում՝ ոչ միայն շարունակում է խնդրահարույց մնալ դպրոցի տանիքի հարցը, այլև՝ ժամանակի ընթացքում փչանում են նաև ձեռք բերված նյութերը:

83. Շենքային անբավարար պայմանների խնդիր է արձանագրվել նաև Արծվաբերդի հիմնական դպրոցում: Դպրոցի շենքն ապահովված չէ սանհանգույցով և բավարար քանակությամբ լվացարաններով: 126 աշակերտ ունեցող դպրոցն ունի միայն մեկ լվացարան, որի ծորակից խմելու ջուրը հոսում է շաբաթը մեկ կամ երկու անգամ, իսկ դպրոցի զուգարանները կառուցված են դպրոցի շենքից դուրս՝ բակում:

84. Մեկ այլ դեպքում՝ Բարեկամավանում վերանորոգման կարիք ունի դպրոցի տանիքը, որի ոչ բարվոք վիճակի պատճառով անձրևաջրերը լցվում են ներս:

85. Մշտադիտարկման ընթացքում վեր է հանվել նաև դպրոցներում և մանկապարտեզներում որակյալ և արդյունավետ կրթության իրականացման համար համապատասխան հաստիքների բացակայության կամ նեղ մասնագետների սղության հարցը: Միաժամանակ, խնդրահարույց է նաև անհրաժեշտ քանակի մասնագիտական հաստիքների ոչ բավարար լինելու հարցը: Օրինակ, Բերքաբերի մանկապարտեզի տնօրենի տեղեկությունների համաձայն, մանկապարտեզին չի հատկացվել

դաստիարակի հաստիք, ինչի կապակցությամբ ինքը դիմել է համայնքապետարան։ Ըստ տնօրենի՝ հաստիքների բացակայության պատճառով վերջինս գործնականում կամավորության սկզբունքներով իրականացնում է նաև դաստիարակի փաստացի գործառույթը։

86. Նեղ մասնագետների, օրինակ, մանկապարտեզում լոգոպետի ծառայությունների անհրաժեշտության հարց է բարձրացվել Ներքին Կարմիրադյուր գյուղում։

87. Հավաքագրված տեղեկությունների համաձայն՝ Ազատամուտի մանկապարտեզում համայնքապետարանի կողմից նշանակված աշխատակիցն իրականացնում է մասնագիտական գործունեություն՝ չունենալով համապատասխան մասնագիտական որակավորում։ Այս դեպքում մասնագիտական կարողությունների զարգացումն ապահովվում է միայն ընթացիկ վերապատրաստումների միջոցով։

88. Գրեթե բոլոր մանկապարտեզներում և դպրոցներում արձանագրվել է բուժքրոջ կամ բժշկի հաստիքի բացակայության խնդիրը՝ պայմանավորված գործող իրավակարգավորումներով։ Այս դեպքում հաստատությունների սաներին և աշակերտներին բուժօգնություն և սպասարկում տրամադրելու նպատակով հաստատությանը բուժքրոյր կցվում է համայնքի բժշկական հաստատությունից։ Նշվածը, ըստ բնակիչների, հաճախ ձևական բնույթ է կրում, իսկ որոշ դեպքերում էլ դպրոցների անձնակազմերը կամ տեղյակ չեն լինում այդ մասին, կամ էլ ահազանգելու դեպքում՝ արագ արձագանք կամ բավարար սպասարկում չեն ստանում։

89. Մշտադիտարկման այցերի ընթացքում բնակիչների, ուսումնական հաստատությունների ներկայացուցիչների տրամադրած տեղեկությունների համաձայն՝ դպրոցների ուսուցչական հաստիքների հետ կապված խնդիրը որոշակիորեն լուծվում է «Դասավանդի՛ր, Հայաստան» ծրագրի միջոցով, սակայն դպրոցի տնօրենների կողմից նշվել է, որ խնդիրը հիմնային լուծում չի ստանում, քանի որ «Դասավանդի՛ր, Հայաստան» ծրագրի կողմից ուղղորդված մասնագետները առավելագույնը տվյալ համայնքում դասավանդում են 2 տարի, որից հետո կրկին համապատասխան մասնագետ չունենալու խնդիր է առաջանում։ Որոշ դեպքերում խնդիրը լուծվում է երթևեկող ուսուցիչների ներգրավման միջոցով։

90. Այցերի ընթացքում արձանագրվել է նաև, որ մշտադիտարկված որոշ դպրոցներում ուսուցչի օգնականի հաստիքն ընկալվում է որպես «հավելյալ»

մանկավարժական ռեսուլս, ինչի հետևանքով ձևավորված չէ ուսուցչի և ուսուցչի օգնականի արդյունավետ և ըստ լիազորությունների համագործակցության պրակտիկա սովորողների ուսուցման, դաստիարակության պատշաճ մակարդակն ապահովելու համար:

91. Հանդիպումների արդյունքում արձանագրվել են դեպքեր, օրինակ, Բաղանիս համայնքի դպրոցում, երբ նեղ մասնագիտական ծառայությունն իրականացվում է հիմնական դասավանդման ընթացքում կամ փոխարեն, քանի որ, ըստ մասնագետների, դժվար է երեխային դասերից հետո պահել կամ նորից դպրոց բերել նախատեսված ծառայությունը տրամադրելու նպատակով: Մինչդեռ, նեղ մասնագիտական ծառայությունները միտված են աջակցելու երեխայի կրթության իրավունքի իրացմանը և, ըստ գործող իրավակարգավորումների, պետք է տրամադրվեն հիմնական դասերից հետո՝ նախապես հաստատված ժամանակացույցի համաձայն:

92. Մշտադիտարկված բոլոր դպրոցներում «ռեսուլս սենյակների» փոխարեն օգտագործում էին «ներառականի սենյակ» արտահայտությունը՝ նկատի ունենալով դպրոցում նեղ մասնագիտական ծառայություն և աջակցություն տրամադրելու համար հարմարեցված, համապատասխան կահավորմամբ և դիդակտիկ նյութերով ապահովված դասասենյակը, ինչն անուղղակիրեն թիրախավորում է և խտրական մոտեցում է ձևավորում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների նկատմամբ:

93. Տեղեկություններ են ստացվել նաև կրթությունից դուրս մնացած, ինչպես նաև իր բնակության վայրում համապատասխան դասարան չլինելու պատճառով կրթություն ստանալու հնարավորության չունեցող երեխաների մասին: Օրինակ՝ Բաղանիս գյուղում, քանի որ առաջին դասարանին համապատասխան տարիքի միայն մեկ երեխա է եղել, այդ գյուղի միջնակարգ դպրոցում առաջին դասարան չի բացվել և ծնողը ստիպված է երեխայի կրթությունն ապահովելու համար ամեն օր իր միջոցներով երեխային տեղափոխել Ոսկեպար գյուղի միջնակարգ դպրոց: Այս դեպքում լուծված չէ տրանսպորտային ծախսերի փոխհատուցման հարցը, ինչը կարևոր է հատկապես այն պատճառով, որ այլ համայնքում դպրոց հաճախելու որոշումը պայմանավորված է ոչ թե ծնողի կամ երեխայի ցանկությամբ, այլ պետության կողմից երեխայի բնակության վայրում վերջինիս կրթության իրավունքի իրացումը չապահովելու հանգամանքով:

94. Դպրոցների մշտադիտարկման արդյունքում վեր հանված խնդիրներից է աշակերտների թվի պակասի պատճառով կոմպլեկտավորված դասարանների ձևավորումը, ինչը որակյալ կրթության կազմակերպման համար դպրոցի տնօրենների կողմից որպես խնդիր է մատնանշվում: Օրինակ՝ Բերքաբեր համայնքի միջնակարգ դպրոցի դասարանները հիմնականում միավորված են, օրինակ 5-6-րդ և 11-12 դասարանների ուսումնական գործընթացը կազմակերպվում է համատեղ՝ 11-րդ դասարանում՝ երեք, 12-րդ դասարանում՝ չորս աշակերտ կա:

95. Երեխայի կրթության իրավունքի երաշխավորման համատեքստում **Պաշտպանն** արձանագրում է, որ պետության պողիտիվ պարտավորության պատշաճ կատարումը պահանջում է նախնառաջ կրթության իրավունքի իրացման համար իրական, կարիքահեն և հասանելի պայմանների ու հնարավորությունների ստեղծումը բոլոր համայնքներում: Մասնավորապես, երեխայի կրթության իրավունքի իրացման հնարավորությունները չպետք է ուղղակիորեն կապված լինեն այն հանգամանքի հետ, թե որտեղ և ինչ սոցիալական պայմաններում է բնակվում երեխան: Ավելին՝ որևէ արտաքին գործոնի հետևանքով խոցելի դարձած երեխաների կրթության իրավունքի իրական երաշխավորման համար պետության կողմից պետք է նախաձեռնվեն լրացուցիչ կոնկրետ ծրագրեր և գործողություններ:

## **Գլուխ 7. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների իրացման հետ կապված խնդիրների վերաբերյալ**

96. Մշտադիտարկման ընթացքում խնդիրներ են արձանագրվել հաշմանդամության կարգավիճակի տրամադրման գործընթացի առնչությամբ: Օրինակ, արձանագրվել են դեպքեր, երբ անձի նկատմամբ հաշմանդամության կարգավիճակ չի սահմանվել, թեև, ըստ բուժող բժշկի տրամադրած տեղեկությունների, նրա առողջական վիճակը չի բարելավվել համեմատած այն ժամանակահատվածի հետ, երբ վերջինիս նկատմամբ հաշմանդամության կարգավիճակ է սահմանված եղել:

97. Այս կապակցությամբ հարկ է նշել, որ խնդիրը համակարգային բնույթ է կրում, ինչի կապակցությամբ Պաշտպանի աշխատակազմն արձանագրել է մի շարք խնդիրներ կապված գործող չափորոշիչների, գործընթացի վերաբերյալ իրազեկման և փորձաքննվողների նկատմամբ անընդունելի վերաբերմունքի հետ: Խնդրի առնչությամբ Պաշտպանը, որպես «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՍԱԿ-ի կոնվենցիայի դրույթների կատարման մշտադիտարկող մարմին, իրականացնում է ուսումնասիրություն, որի արդյունքներով պայմանավորված պարզաբանումներ կպահանջի ոլորտային իրավասու պետական մարմնից:

98. Խնդիրներ են արձանագրվել նաև հաշմանդամություն ունեցող անձանց աջակցող միջոցների տրամադրման ընթացակարգերի իրազեկվածության հետ կապված, ինչի հետևանքով մարդիկ չեն օգտվել պետության կողմից հաշմանդամություն ունեցող անձանց աջակցող միջոցների ձեռքբերման հավաստագրեր ստանալու իրավունքից: Նման խնդիրներ են արձանագրվել, օրինակ, Ազատամուտ, Բերքաբեր, Բարեկամավան գյուղերում: Այս դեպքերում Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների կողմից բնակիչներին ներկայացվել է վերականգնողական անհատական ծրագրերում լրացում կատարելու, վերագնահատում իրականացնելու կարգը, աջակցող միջոցներ ստանալու համար դիմելու և հավաստագրեր ստանալու ընթացակարգը, կատարվել են անհրաժեշտ ուղղորդումները: Միաժամանակ, Պաշտպանի իրավասությունների շրջանակներում, խնդիրները փոխանցվել են իրավասու պետական մարմինների ներկայացուցիչներին, խնդրահարուց դեպքերը քննարկվել են ոլորտի պատասխանատուների հետ: Արդյունքում իրավասու մարմինների ներկայացուցիչների կողմից իրականացվել են

նաև տնայցեր, կարիքների գնահատում, ձեռնարկվել են անհրաժեշտ միջոցներն անհատական խնդիրների կարգավորման ուղղությամբ:

99. Կարևորելով ոլորտի իրավասու ներկայացուցիչների հետ համագործակցությունը՝ Պաշտպանն արձանագրում է, որ անհրաժեշտ է լրացուցիչ շանքեր գործադրել բնակիչների շրջանում իրազեկվածության բարձրացման ուղղությամբ: Նշվածը հատկապես կարևոր է մարզկենտրոնից կամ խոշորացված համայնքի վարչական կենտրոնից հեռու գտնվող բնակավայրերի դեպքում, որտեղ տեղեկատվության հասանելիության ու մատչելիության ապահովման համար առկա են լրացուցիչ դժվարություններ:

## **Գլուխ 8. Առողջության պահպանման իրավունքի հետ կապված խնդիրների վերաբերյալ**

100. Մշտադիտարկման ընթացքում խնդիրներ են արձանագրվել բնակիչների առողջության պահպանման իրավունքի, ինչպես նաև համայնքահեն ծառայությունների սղության կամ բացակայության հետ կապված: Օրինակ, Բարեկամավան համայնք շտապօգնության մեքենան գալիս է հջևան քաղաքից՝ մոտ երկու ժամում, ինչը ոչ միշտ է արդյունավետ և ուղղակիորեն վտանգավոր է մարդու կյանքի և առողջության համար, իսկ որոշ դեպքերում էլ անդառնալի հետևանքներ կարող է առաջանալ: Մի շարք համայնքներում բնակիչների կողմից բարձրացվել է համայնքում վերականգնողական ծառայությունների կամ նեղ մասնագիտական ծառայությունների բացակայության հարցը, ինչի պատճառով իրենց համար մարզկենտրոնում կամ Երևանում առկա ծառայություններից օգտվելը ոչ միշտ է մատչելի և հասանելի:

101. Մշտադիտարկված համայնքներում արձանագրվել է նաև հանրապետությունում իրականացվող սքրինիգային ծրագրերում սահմանամերձ գյուղերի բնակչության ընդգրկման անբավարար մակարդակ: Մշտադիտարկումների ընթացքում արձանագրվել է, որ որոշ գյուղեր այդ ծրագրերում (մամոգրաֆիա, տեսողություն, ֆյուրոգրաֆիա) ընդգրկված չեն: Օրինակ, սքրինինգային ծրագրերի շրջանակում կրծքագեղձի մամոգրաֆիկ հետազոտություններ իրականացվել են Բերքաբերում, Ներքին Կարմիրաղբյուրում և Մովսեսում, իսկ տրամադրած տեղեկությունների համաձայն՝ Արծվաբերդ գյուղի բնակիչների համար նախատեսվում է իրականացնել հետազոտություններ Բերդ քաղաքում՝ 2022 թվականի օգոստոսի 15-ից հետո: Մյուս մշտադիտարկված գյուղերում այցերի օրերի դրությամբ սքրինինգային ծրագրի վերաբերյալ բնակիչներն առհասարակ տեղեկացված չեն եղել:

102. Որոշ համայնքներում բուժանձնակազմերի և բնակիչների կողմից բարձրացվել են պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության ու սպասարկման շրջանակներում տրամադրվող դեղերի տեսականու անբավարար լինելու և պատշաճ կարգով մատակարարում չիրականացնելու կամ դեղորայքի հասանելիության հետ կապված հարցեր: Օրինակ՝ Մովսես գյուղի բնակիչներից մեկը հայտնել է, որ որպես շաքարային դիաբետ ունեցող անձ անվճար ստանում է «Դիաբետոն» դեղորայքը, սակայն վերջին 1 ամսվա ընթացքում դեղորայքը առկա չէ և հնարավոր չէ ձեռք բերել:

103. Մեկ այլ դեպքում, օրինակ, Այգեծոր գյուղի հիվանդանոցի դեղորայքը բերվում է հջևանի հիվանդանոցից, սակայն տեղափոխման գործընթացի հետ կապված ևս խնդիրներ են առաջանում: Այսպես, դեղերը բերվում են երկու արկղով, նախապես Այգեծորի հիվանդանոցի կողմից տրամադրվում է լիազորագիր, սակայն մարդկային և ֆինանսական ռեսուրսների սղության պատճառով լիազորագիրը տրվում է հջևան գնացող ցանկացած անձի, ով ունի մեքենա, հաճախ, նույնիսկ տաքսու վարորդներին: Նույն կերպ է իրականացվում նաև Covid թեստերի տեղափոխումը հջևան, ինչը չի բխում գործող իրավակարգավորումների պահանջներից:

104. Այգեծորում և Բարեկամավանում արձանագրվել են առաջնային բուժօգնության և բուժսպասարկման օղակի շենքային և տեխնիկական պայմանների՝ մարդու իրավունքների տեսանկյունից բացարձակ անընդունելի խնդիրներ: Այսպես, Այգեծորի հիվանդանոցը կառուցվել է 1912 թվականին և մինչև օրս չի վերանորոգվել, ժամանակի ընթացքում կատարվել է միայն կոսմետիկ վերանորոգում: Բարեկամավանում բուժսպասարկման կենտրոնում առհասարակ հնարավոր չէ կազմակերպել բուժսպասարկում կամ բուժօգնություն տրամադրել: Չինարիում էլ բարձրացվել է բուժկետի կահավորման հարցը: Նշվել է նաև, որ թվով 3 սենյակների լուսավորությունն անբավարար է (տե՛ս հավելվածի նկարներ 8-10):

105. Արձանագրվել են նաև դեպքեր, երբ թեև համայնքին հատկացված են եղել շտապօգնության մեքենաներ, սակայն ֆինանսական կամ տեխնիկական խնդիրների պատճառով գործնականում դժվարություններ են առաջանում դրանց սպասարկման և շահագործման հարցում: Այսպես, օրինակ, Այգեծորում շտապօգնության կանչերի արձագանքումն ապահովվում է հիվանդանոցի անձնակազմի անձնական ավտոմեքենաներով, քանի որ հաստատության շտապօգնության մեքենաներից մեկը տեխնիկական անսարքությունների պատճառով հնարավոր չի լինում շահագործել, իսկ մյուսը՝ վառելիքի սղության պատճառով հազվադեպ է շահագործվում:

106. Նշվածը հատկապես խնդրահարույց է սահմանամերձ բնակավայրի դեպքում, որտեղ պատշաճ կահավորված և բավարար նյութատեխնիկական հագեցվածություն ունեցող բուժսպասարկման կետի առկայությունը սկզբունքային և կարևորագույն նշանակություն ունի ինչպես տվյալ համայնքի, այնպես էլ հարակից համայնքների բնակիչների իրավունքների երաշխավորման տեսանկյունից:

107. Պաշտպանը հատուկ ընդգծում է, որ առողջության պահպանման իրավունքի երաշխավորումը պետության՝ այլընտրանք չունեցող պոզիտիվ պարտավորությունն է: Ուստի, պետությունը պարտավոր է լրացուցիչ ջանքեր գործադրել այս իրավունքի իրական երաշխավորման համար: Անհրաժեշտ է հատկապես խոշորացված համայնքից կամ մարզկենտրոնից հեռու գտնվող համայնքներին հատկացնել շտապօգնության մեքենաներ՝ անձի հրատապ տեղափոխումը բուժհաստատություն հնարավորինս սեղմ ժամկետում ապահովելու և անդառնալի հետևանքները կանխելու նպատակով: Միաժամանակ՝ հրատապության կարգով պետք է լուծել սահմանամերձ բնակավայրերի ամբողատոր և բուժսպասարկում իրականացնող օղակների շենքային, նյութատեխնիկական և մասնագիտական ռեսուրսների խնդիրները:

## V. ԽՆԴԻՐՆԵՐԻ ԴԻՏԱՐԿՈՒՄԸ

### ԻՐԱՎԱԿԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

108. Փաստահավաք աշխատանքների ընդհանուր ամփոփումը հավաստում է, որ հիմնական բարձրացված խնդիրները կարելի է դասակարգել երկու խմբի՝ անվտանգային և կենսական, սոցիալական նշանակության (հատկապես՝ խմելու և ռոռոգման ջրի հասանելիություն, միջհամայնքային ասֆալտապատում, լուսավորության ցանցի վերականգնում, միջհամայնքային հաղորդակցության ապահովում) հարցեր:

109. Այս առնչությամբ անհրաժեշտ է վկայակոչել նախ անվտանգային խնդիրներին վերաբերող հարցերը կարգավորող իրավական ակտերը և դրանց լույսի ներքո դիտարկել սույն զեկույցում ներկայացված խնդիրները, ինչպես նաև դրանց ուղղությամբ պետության կողմից ձեռնարկման ենթակա գործողությունները:

110. Հարկ է արձանագրել, որ անկախ ընթացող բանակցային գործընթացներից, ներկայումս սահմանային իրավիճակը փաստացի շարունակում է մնալ լարված, ինչի արդյունքում պարբերաբար տեղի են ունենում կրակոցներ<sup>5</sup>, ինչպես նաև զինծառայողների շարքում արձանագրվում են մահվան դեպքեր<sup>6</sup>: Ըստ էության, կոնֆլիկտային իրավիճակը շարունակվում է Հայաստանի Հանրապետության և Ադրբեյջանի Հանրապետության միջև:

111. Այսպիսով՝ զեկույցում ներկայացված իրադրության նկատմամբ հավասարապես կիրառելի են նաև զինված բախումների ժամանակ անձանց իրավունքները երաշխավորող միջազգային իրավունքի աղբյուրները:

112. Այս առնչությամբ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի «Տնտեսական պաշտպանության, սոցիալական և մշակութային իրավունքները հակամարտության մեջ» վերտառությամբ զեկույցի շրջանակներում արձանագրվել է, որ պետության պողիտիվ պարտավորությունները, որոնք կապված են առողջության, սննդի, բնակարանի, ջրի հասանելիության կամ կրթության իրավունքների հետ,

<sup>5</sup> Տե՛ս «Հ պաշտպանության նախարարության կողմից 02.09.2022 թվականին տարածված հայտարարությունը»:

Հղումը՝ <https://www.mil.am/hy/news/10982>

<sup>6</sup> Տե՛ս «Հ պաշտպանության նախարարության կողմից 06.09.2022 թվականին տարածված հայտարարությունը»:

Հղումը՝ <https://www.mil.am/hy/news/10990>

նույնիսկ արտակարգ իրավիճակների կամ զինված բախումների ժամանակ, շարունակում են ուժի մեջ մնալ<sup>7</sup>:

113. ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովը ճանաչել է «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի կիրառելիությունը ինչպես միջազգային, այնպես էլ ոչ միջազգային զինված հակամարտությունների շրջանակներում, այդ թվում օկուպացիոն իրավիճակներում: Հանձնաժողովն անդրադարձել է այդ խնդիրներին դաշնագրի թիվ 31 ընդհանուր մեկնաբանության<sup>8</sup> շրջանակներում և պետությունների պարբերական զեկույցների վերաբերյալ իր ամփոփիչ դիտարկումներում<sup>9</sup> հաստատելով, որ միջազգային մարդասիրական իրավունքը և մարդու իրավունքների միջազգային իրավունքը փոխլրացնող են, այլ ոչ թե միմյանց բացառող:

114. Այսպիսով, վերոգրյալ դիրքորոշումների համապարփակ ուսումնասիրությունը փաստում է մարդու իրավունքների միջազգային իրավունքի և միջազգային մարդասիրական իրավունքի ունիվերսալ և անքակտելի բնույթը, միաժամանակ արձանագրելով, որ դրանք ոչ միայն չեն բացառում իրար, այլ՝ փոխլրացնում են: Ընդ որում, հարկ է ընդգծել նաև, որ վկայակոչված իրավունքների գործողությունն ու կիրառելիությունը կապված չէ պետության տարածքում որևէ իրավական ռեժիմի գործողության հետ<sup>10</sup>:

---

<sup>7</sup> Տե՛ս ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի «Տնտեսական պաշտպանության, սոցիալական և մշակութային իրավունքները հակամարտության մեջ» վերտառությամբ զեկույցը, կետ 15:

Հղումը՝ <https://www.ohchr.org/sites/default/files/Documents/Issues/ESCR/E-2015-59.pdf>

<sup>8</sup> Human Rights Committee, general comment No. 31 (2004) on the nature of the general legal obligation on States Parties to the Covenant, պար. 11:

Հղումը՝ <https://www.refworld.org/docid/478b26ae2.html>

<sup>9</sup> CCPR/C/USA/CO/3, para. 10: CCPR/C/ COD/CO/3, para. 13:

Տե՛ս նաև՝ Committee's concluding observations on Israel (CCPR/CO/78/ISR), Sri Lanka (CCPR/CO/79/LKA) and Colombia (CCPR/CO/80/COL):

<sup>10</sup> Բացառություն է կազմում արտակարգ իրավիճակներում կոնվենցիոն հիմքերով ամրագրված՝ պարտավորություններից շեղման իրավունքն իրացնելու վերաբերյալ պետության իրազեկումը, որը կիրառելի չէ սույն զեկույցում ներկայացվող իրադրության նկատմամբ:

## **Գլուխ 1. Բավարար կենսամակարդակի իրավունք**

115. Հարկ է արձանագրել որ սույն գեկուցի շրջանակներում ներկայացված փաստական հանգամանքների համաձայն՝ Ադրբեջանի կողմից 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված պատերազմից հետո ադրբեջանական զինծառայողների կողմից պարբերաբար արձակվում են կրակոցներ բնակավայրերի անմիջական հարևանությամբ, և դրանք որոշ դեպքերում լինում են թիրախավորված՝ գյուղերի ու բնակչների տների ուղղությամբ: Բնակչների կողմից տրամադրված տեղեկությունների համաձայն՝ ադրբեջանական զինծառայողների կողմից դրսերվում է անընդունելի պահվածք, զենքի ցուցադրման միջոցով սպառնալիքներ են ներկայացվում գյուղացիներին: Ադրբեջանական զինծառայողների կողմից դիրքեր են տեղակայվել բնակավայրերի սարատեղիներին առավել մոտ վայրերում և դրանով գրեթե անհնարին դարձրել հողատարածքների օգտագործումը:

116. Վկայակոչված փաստերի ուսումնասիրությունը վկայում է, որ ադրբեջանական զինծառայողների կողմից կատարվող գործողություններն անհամատեղելի են զեկուցում ներկայացված բնակավայրերում բնակվող անձանց բավարար կենսամակարդակ ունենալու իրավունքի հետ:

117. Այս առնչությամբ վկայակոչման է Ենթակա «Մարդու իրավունքների համընդհանուր հոչակագրի» 25-րդ հոդվածի 1-ին մասը, որի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ոք իրավունք ունի այնպիսի կենսամակարդակի, ներառյալ սնունդը, հագուստը, բնակարանը, թժշկական ինսամբը և սոցիալական անհրաժեշտ սպասարկումը, որն անհրաժեշտ է իր և իր ընտանիքի առողջությունն ու բարեկեցությունը պահպանելու համար, և գործազրկության, հիվանդության, հաշմանդամության, այրիանալու, ծերության կամ իր կամքից անկախ ապրուստի միջոցներից զրկվելու դեպքում ապահովելու իրավունք:»:

118. Զեկուցում ներկայացված գործողությունների արդյունքում կոպտորեն խախտվում է յուրաքանչյուր անձի և նրա ընտանիքի համար բավարար կենսամակարդակի իրավունքը, ընդ որում նշված իրավունքի խախտումը դրսերվում է ոչ միայն այլ պետության զինված ուժերի կողմից դրսերված վարքագծի արդյունքում, այլ նաև անձի՝ կյանքի պայմանների անընդհատ բարելավման իրավունքի ոչ պատշաճ ապահովման լույսի ներքո:

119. Ավելին՝ ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների հանձնաժողովն իր թիվ 3 ընդհանուր մեկնաբանությունում<sup>11</sup> հաստատել է, որ մասնակից պետություններն ունեն հիմնական պարտավորություն՝ ապահովելու Դաշնագրի յուրաքանչյուր իրավունքի առնվազն նվազագույն էական մակարդակի բավարարումը:

120. «Միջազգային գինված կոնֆլիկտների զոհերի պաշտպանության վերաբերյալ» ժնկի 1949 թվականի օգոստոսի 12-ի կոնվենցիաներին կից ժնկի 1977 թվականի լրացուցիչ արձանագրության 54-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

**«2. Արգելվում է հարձակման ենթարկել կամ ոչնչացնել, դուրս գրանել կամ շարքից հանել այն օբյեկտները, որոնք անհրաժեշտ են քաղաքացիական բնակչության գոյագուման համար, այնպիսիք, ինչպիսիք են սննդամթերքի պահուստները, պարեն արդարող գյուղակներեսական շրջանները, ցանքերը, անասունները, խմելու ջրով մարդակարարելու կառուցվածքները և ջրի պահուստները, ինչպես նաև ոռոգման կառուցվածքները՝ հարուկ նպագուկ ունենալով թույլ չփալ դրանց օգտագործումը քաղաքացիական բնակչության կողմից կամ հակառակորդ պետության կողմից որպես գոյության պահպանման միջոց, անկախ դրդապատճառներից, լինի դա քաղաքացիական անձանց մեջ սով առաջացնելու, նրանց մեկնել սպիալելու նպագուկ կամ որևէ այլ պատճառով»:**

121. Հատկանշական է, որ «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 11-րդ հոդվածով, ի թիվս այնի, սահմանվում է նաև, որ դաշնագրին մասնակցող պետությունները **ճանաչում են յուրաքանչյուրի համար և նրա ընտանիքի համար բավարար այնպիսի կենսամակարդակի իրավունքը, որն իր մեջ ներառում է բավարար սնունդ, հագուստ ու բնակարան և կյանքի պայմանների անընդհատ բարելավման իրավունքը:**

122. Այսպիսով, հարկ է արձանագրել, որ պետությունների կողմից ճանաչվում է յուրաքանչյուրի և նրա ընտանիքի համար բավարար կենսամակարդակի իրավունքը, ինչն իր հերթին ենթադրում է, որ անդամ պետությունը կրում է վկայակոչված

<sup>11</sup> Committee on Economic, Social and Cultural Rights, general comment No. 3 (1990) on the nature of States parties' obligations (հոդ. 2 (1) of the Covenant), պար. 10:

Հղումը՝ <https://www.refworld.org/pdfid/4538838e10.pdf>

իրավունքների ապահովմանն ուղղված գործողությունների ձեռնարկման պոզիտիվ պարտավորություն:

123. «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 11-րդ հոդվածով երաշխավորված իրավունքների վերաբերյալ ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների հանձնաժողովը, թիվ 4 ընդիանուր մեկնաբանությունների<sup>12</sup> շրջանակներում անդրադառնալով բավարար կենսամակարդակի բաղադրատարր հանդիսացող բնակարանի իրավունքին, արձանագրել է՝

**«Բնակարան ունենալու իրավունքը չպետք է մեկնաբանվի նեղ կամ սահմանափակող իմաստով, որպիսի պարագայում այն կհավասարեցվի, օրինակ, ապաստանի հետ, որը դրամադրվում է բացառապես դանիք ունենալու դրամաբանությամբ: Այն պետք է դիմումի որպես ինչ-որ գեղ ապահով, խաղաղ և արժանապարիկ ապրելու իրավունք»:**

««Բնակարան» հասկացությունը ներառում է հերկայալ դարրերը՝ ա) դիմուման անվտանգություն, բ) ծառայությունների հասանելիություն, գ) մակչելիություն, դ) բնակվելու հնարավորություն, ե) հասանելիություն, զ) գեղակայում և է) մշակութային համապատասխանություն<sup>13</sup>:»:

124. Բնակարան ունենալու իրավունքը մեկնաբանվում է այն կերպ, որ այն իր մեջ ներառում է ապահով, խաղաղ և անվտանգ ապրելու իրավունքները, մինչդեռ բնակավայրերի անմիջական հարևանությամբ, գյուղերի ու բնակիչների տների ուղղությամբ ադրբեջանական զինծառայողների կողմից պարբերաբար արձակվող կրակոցները, զենքի ցուցադրման միջոցով սպառնալիքների ներկայացումն անհամատեղելի են անձանց անվտանգ և խաղաղ պայմաններում ապրելու և ապահով բնակարան ունենալու իրավունքի հետ: **Նման գործողությունների իրավական նշանակությունը հատկապես ընդգծվում է նկատի ունենալով դրանց հաճախականությունը և համատարած բնույթը:**

125. Այսպես, ադրբեջանական զինծառայողների կողմից զեկուցում ներկայացված տեղեկությունների համաձայն՝ որոշ ուղղություններում կրակոցները կրում են

<sup>12</sup> Տե՛ս ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների հանձնաժողովի թիվ 4 ընդիանուր մեկնաբանություններ, պար. 7:

Հղումը <https://www.refworld.org/pdfid/47a7079a1.pdf>

<sup>13</sup> Տե՛ս նույն տեղում, պար. 8:

պարբերական բնույթ, պարզ լսելի են գյուղերում ու առաջացնում անհանգստություն, առաջին հերթին՝ կանանց ու երեխաների համար: Որոշ դեպքերում ադրբեջանական զինծառայողների կրակոցներն ուղղվել են արոտավայրերում գտնվող կենդանիների ուղղությամբ, գրանցվել են դեպքեր, երբ կենդանիները սատկել են կրակոցների արդյունքում:

126. Ստեղծված իրավիճակի ուսումնասիրությունը փաստում է, որ զեկուցում ներկայացված սահմանամերձ բնակավայրերում բնակվող անձինք զրկված են բավարար կենսամակարդակ ունենալու իրենց իրավունքից օգտվելու հնարավորությունից՝ նկատի ունենալով այլ պետության զինված ուժերի կողմից դրսևորվող վարքագիծը:

127. **Մասնավորապես՝ ադրբեջանական զինծառայողների համատարած և պարբերական բնույթ կրող վարքագիծն անհամատեղելի է անձի բավարար կենսամակարդակ ունենալու իրավունքի հետ՝ հատկապես բնակարան ունենալու իրավունքի վերաբերյալ տրված մեկնաբանությունների լուսի ներքո, քանի որ առնվազն ապահովված չեն բնակարան հասկացության մեջ ներառվող ապահովության և անվտանգության նվազագույն պայմանները: Ադրբեջանական զինծառայողների կողմից կատարվող գործողությունների արդյունքում հնարավոր չի լինում ապահովել նաև անձի՝ բնակարան ունենալու իրավունքի կարևոր բաղադրատարր հանդիսացող **խաղաղ ապրելու իրավունքը**:**

## **Գլուխ 2. Հոգեբանական ճնշումներ՝ անվտանգության ամենօրյա սպառնալիքներով ու շարունակվող կոնֆլիկտի բաղադրիչների առկայությամբ՝ միտված սահմանամերձ բնակավայրերի հայաթափմանը**

128. Զեկուցում նկարագրված գործողություններն իրենց պարբերական և համատարած բնույթով ուղղակի սպառնալիք են հանդիսանում տվյալ բնակավայրերում բնակվող անձանց անձնական անվտանգությանը, նման գործողությունների շարունակական բնույթը թույլ է տալիս եզրահանգել, որ կոնֆլիկտային իրադրությունն անկախ տեղի ունեցող քաղաքական գործընթացներից, շարունակվում է:

129. Կատարվող գործողությունների համատարած բնույթը փաստում է, որ ադրբեջանական զինծառայողների կողմից դրսերված վարքագիծը նպատակ է հետապնդում ահաբեկելու տեղի բնակիչներին, վերջիններիս մեջ տագնապ առաջացնելու և որպես վերջնանպատակ հայաթափելու սահմանամերձ բնակավայրերը: Նշվածն ակնհայտորեն ադրբեջանական զինծառայողների կողմից ինքնաբուխ կազմակերպված գործընթաց չէ, ուղղորդված է ադրբեջանական քաղաքական ղեկավարության կողմից և ուղղված լինելով Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականության դեմ առաջին հերթին նպատակ է հետապնդում հայաթափել սահմանամերձ համայնքները:

130. Զեկուցում նկարագրված գործողություններն ակնհայտորեն հետապնդում են քաղաքացիական բնակչությանը ահաբեկելու նպատակ, ինչը հակասում է ոչ միայն միջազգային իրավունքի սկզբունքներին, այլև կոպտորեն խախտում է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին Եվրոպական կոնվենցիայի (ՄԻԵԿ) 3-րդ և 8-րդ հոդվածներով երաշխավորված իրավունքները:

131. «Միջազգային զինված կոնֆլիկտների զոհերի պաշտպանության վերաբերյալ» ժնկի 1949 թվականի օգոստոսի 12-ի կոնվենցիաներին կից ժնկի 1977 թվականի լրացուցիչ արձանագրության 51-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

«2. Քաղաքացիական բնակչությունը որպես այդպիսին, ինչպես նաև քաղաքացիական առանձին անձինք չպետք է հանդիսանան հարձակումների օբյեկտ: **Արգելվում են բռնության կամ բռնության սպառնալիքի ներքո այնպիսի գործողությունները, որոնք նպատակ ունեն ահաբեկել քաղաքացիական բնակչությանը:**»:

132. Միաժամանակ, ՄԻԵԿ-ի 3-րդ հոդվածի համաձայն՝

«Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային կամ նվասդացնող վերաբերմունքի կամ պարժի:»:

ՄիԵԿ-ի 8-րդ հոդվածի համաձայն՝

«1. Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական ու ընդունելի կյանքի, բնակարանի և նամակագրության նկաղմամբ հարգանքի իրավունք:»:

133. Հարկ է արձանագրել, որ Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի (ՄիԵԴ) կողմից ձևավորված կայուն նախադեպային պրակտիկայի շրջանակներում արձանագրվում է, որ անձնական կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքը ներառում է ոչ միայն ֆիզիկական, այլ նաև հոգեկան անձեռնմխելիությունը<sup>14</sup>:

134. Ավելին՝ Մարդու իրավունքների Եվրոպական դատարանը, ՄիԵԿ 3-րդ և 8-րդ հոդվածների լույսի ներքո, ընդգծել է երեխաների և հասարակության այլ խոցելի անդամների՝ պետական պաշտպանությունից օգտվելու կարևորությունը, այն դեպքերում, երբ նրանց ֆիզիկական և հոգեկան բարեկեցությանը վտանգ է սպառնում<sup>15</sup>:

135. Ամփոփելով՝ հարկ է արձանագրել, որ քաղաքացիական բնակչությանը ահաբեկելու, վերջիններիս շրջանում տագնապ տարածելու և հոգեկան տառապանք պատճառելու վարքագիծն ակնհայտ ապօրինի է: Նման վարքագծի դրսևորումը խախտում է անձի անձնական կյանքի, մասնավորապես՝ հոգեկան անձեռնմխելիության և բարեկեցության իրավունքը: Հատկանշական է, որ այդ վարքագծի պարբերական ու շարունակական բնույթը հղի է մի շարք բացասական հետևանքներով, ընդհուպ տվյալ տարածքներում բնակվող անձանց կողմից իրենց բնակավայրերը լքելը:

136. Մասնավորապես՝ փաստահավաք աշխատանքների արդյունքում պարզվել է, որ որոշ հողատարածքներ բնակիչների կողմից չեն օգտագործվում, քանի որ նշանառության տակ են ու մարդկանց մոտենալու դեպքում ադրբեջանական

<sup>14</sup> Տե՛ս օրինակ՝ Բուտուրգան ընդդեմ Ռումինիայի, թիվ 56867/15 գործով կայացված որոշումը: Հղումը՝ <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-200842>

Վավրիցկան և այլոք ընդդեմ Չեխիայի Հանրապետության, թիվ 47621/13 գործով կայացված որոշումը: Հղումը՝ <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-209039>

<sup>15</sup> Տե՛ս Վետյեն և այլոք ընդդեմ Գերմանիայի գործով կայացված որոշումը, պար. 74: Հղումը՝ <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-181583>

զինծառայողները կրակոցներ են արձակում՝ գյուղատնտեսական աշխատանքները համարելով ինժեներական աշխատանք:

137. Որոշ բնակավայրերի վարչական ղեկավարներ նշում են, որ անմիջական հարևանությամբ ադրբեջանական զինծառայողների ակնհայտ ապօրինի ներկայությունը, նրանց բացահայտ հանցավոր արարքներն ամբողջությամբ խաթարել են քաղաքացիական անձանց բնականոն կյանքն ու հոգեկան անձեռնմխելիությունը:  
**Կատարված փաստահավաք աշխատանքների արդյունքում պարզվել է, որ ադրբեջանական զինծառայողներն իրենց անօրինական արարքներով ահաբեկում են բնակիչներին, մասնավորապես՝ ժամանակ առ ժամանակ կիրառում են փոքր կամ խոշոր տրամաչափի գենքեր, որը պարզ լսելի է բնակավայրում (տե՛ս [տեսանյութը](#)), ավելին՝ Գեղարքունիքի մարզի գրեթե բոլոր համայնքներում մարդիկ նշել են, որ գիշերային ժամերին ադրբեջանական զինված ուժերը հեռահար ուժեղ լուսեր են միացնում գյուղացիների տների պատուհանների ուղղությամբ՝ հոգեբանական լարվածություն ապահովելու նպատակով։ Ըստ բնակիչների՝ ադրբեջանցի զինծառայողները հրդեհած անիվներն իրենց դիրքերի բարձրությունից մեծ ուժով նետում են հավաքած խոտի և արոտավայրի ուղղությամբ՝ միտումնավոր այրելով ու հրդեհելով արոտավայրերը։ Բնակչության նկատմամբ հոգեբանական ճնշում է գործադրվում նաև անօդաչու թռչող սարքերի մշտական ներկայությունն ու լսելի ձայնը իրենց բնակավայրերին մոտ տարածքներում (տե՛ս [տեսանյութը](#))։ Ադրբեջանական զինծառայողների կողմից հանցավոր արարքների շարունակական բնույթ կրելը փաստում է, որ դրանց իրական պատճառը ադրբեջանական իշխանությունների հայատյաց ու թշնամանք քարոզող պետական քաղաքականությունն է։ Այս ամենն ունի նաև պարբերական բնույթ, ինչի վառ վկայումն է 2022 թվականի սեպտեմբերի 1-ին, 2-ին և 3-ին Վարդենիս համայնքի սահմանամերձ Նորաբակ բնակավայրի մոտակա սարերում ադրբեջանական զինծառայողների կողմից հրդեհած անիվների նետումը դեպի բնակավայրեր՝ նպատակ հետապնդելով այրել խոտհարքները և արոտավայրերը։**

138. Չնայած այն հանգամանքին, որ հայկական զինված ուժերի ներկայությունն իր զապող և հավասարակշռող ազդեցությունն ունի ադրբեջանական զինծառայողների կողմից դրսենորվող վարքագիծը կանխելու և իրավիճակի նկատմամբ լիարժեք հսկողություն ապահովելու առումով, այդուհանդերձ ադրբեջանական կողմի առավել

անպատասխանատու պահվածքի «պատճառը» նաև այն է, որ հարակից տարածքներում ադրբեջանական խաղաղ բնակչություն չկա, և նման պայմաններում հայկական սահմանամերձ համայնքների բնակչություն առավել խոցելի են դառնում ադրբեջանական զինված ուժերի կողմից ուժի գործադրման, հոգեբանական ճնշման ու ահաբեկման շատ կոնկրետ գործողություններին հանդիման:

139. Ներկայացված փաստերի և վկայակոչված իրավական հիմքերի համադրման արդյունքում հարկ է արձանագրել, որ ադրբեջանական զինծառայողների կողմից քաղաքացիական անձանց կողմից իրականացվող գյուղատնտեսական աշխատանքներին խոչընդոտելը, պարբերական կրակահերթերը, այրվող իրեր նետելու միջոցով՝ արոտավայրեր այրելն ուղղակիորեն հարձակում են հանդիսանում քաղաքացիական անձանց վրա և նպատակ են հետապնդում ահաբեկել վերջիններին:

140. Վերոգրյալը գնահատման է ենթակա ադրբեջանական զինված ուժերի կողմից դրսերված վարքագիծի վերջնանպատակի լուսի ներքո, մասնավորապես՝ բնակչության ահաբեկումը և տագնապի տարածումը, բնականոն կենսագործունեությանը խոչընդոտելը, ըստ էության, հետապնդում են տվյալ բնակավայրերը հայաթափելու նպատակ:

141. Զեկույցում ներկայացված Ադրբեջանական զինված ուժերի կողմից դրսերված վարքագիծը մեծապես վտանգում է տվյալ բնակավայրերում բնակվող անձանց ոչ միայն բավարար կենսամակարդակի՝ այդ թվում նաև ապահով, խաղաղ և անվտանգ պայմաններում ապրելու իրավունքի իրացումը, այլև **կոպտորեն խախտում է անվտանգային հարցերին առնչվող միջազգային իրավունքի իրամայականները**:

142. «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ» Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիայի 2-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

«2. Ոչ մի բացառիկ հանգամանք, ինչպիսին էլ այն լինի՝ պատերազմական դրություն կամ պատերազմի վրանգ, ներքին քաղաքական անկայունություն կամ ցանկացած այլ արդարակարգ իրավիճակ, չի կարող վկայակոչվել որպես խոշտանգումների արդարացում»:

143. ՄԱԿ-ի խոշտանգումների կանխարգելման հանձնաժողովը, անդրադառնալով վկայակոչված հոդվածի մեկնաբանմանը, թիվ 2 ընդհանուր մեկնաբանությունների<sup>16</sup> շրջանակներում նախևառաջ արձանագրել է՝

«Կոնվենցիայի 2-րդ հոդվածի 2-րդ կետը սահմանում է, որ խոշտանգումների արգելքը բացարձակ է և անքակտելի:

(...)

Խորականության բացառման սկզբունքը մարդու իրավունքների պաշտպանության հիմնական և ընդհանուր սկզբունք է և հիմնարար է Կոնվենցիայի մեկնաբանման և կիրառման համար (...) Հանձնաժողովն ընդգծում է, որ որևէ արարք որպես խոշտանգում որակելու իմաստով կարևոր գործոն է համարվում մշակոր կամ ֆիզիկական բռնության կամ բռնության խորական կիրառումը»:

144. Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության 2-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝

«4. Բոլոր անդամները միջազգային հարաբերություններում ձեռնպահ են ցանկացած պետության դարաձբային ամբողջականության կամ քաղաքական անկախության նկատմամբ և/կամ Միավորված ազգերի նպատակներին անհարիր որևէ այլ ձևով **ուժի գործադրումից կամ դրա սպառնալիքից:**»:

145. Ավելին՝ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի թիվ 2625 իրակագրի<sup>17</sup> շրջանակներում անդրադարձ է կատարվել վկայակոչված կարգավորմանը, մասնավորապես՝ արձանագրելով.

«Ուժի գործադրման սպառնալիքը կամ ուժի գործադրումը հանդիսանում է միջազգային իրավունքի և Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության խախտում և երբեք չպետք է օգտագործվի որպես միջազգային խնդիրների կարգավորման միջոց:

(...)

Հետևաբար, զինված միջամբությունը, **ինչպես նաև սպառնալիքի բոլոր այլ ձևերը,** ուղղված պետության կամ նրա քաղաքական, դնդեսական և մշակութային դարձությունը, հակասում են միջազգային իրավունքին:

<sup>16</sup> Հղումը՝

<http://docstore.ohchr.org/SelfServices/FilesHandler.ashx?enc=6QkG1d%2FPPRiCAqhKb7yhskvE%2BTuw1m w%2FKU18dCyrYrZhDDP8yaSRi%2Fv43pYTgmQ5n7dAGFdDalfzYTJnWNYOXxeLRAIVgbwcSm2ZXH%2BcD %2B%2F6lTOpc7BkgqIATQUZPVhi#:~:text=5.,any%20territory%20under%20its%20jurisdiction.>

<sup>17</sup> Հղումը՝ <https://www.auswaertiges-amt.de/blob/2165236/b03d8c5c0c74fc7c9947bee51cd27163/un-gv-res-freundschaftliche-beziehungen-data.pdf>

146. Արդարադատության միջազգային դատարանը, անդրադառնալով ուժի կիրառման սպառնալիքին<sup>18</sup>, արձանագրել է.

«(...) 2-րդ հոդվածի 4-րդ կերպում «սպառնալիք» և «ուժի կիրառում» հասկացությունները միավորվել են այն իմաստով, որ եթե ուժի կիրառումն ինքնին փվալ դեպքում անօրինական է, նման **ուժի կիրառման սպառնալիքը նույնպես անօրինական է:**»:

147. Միաժամանակ, Արդարադատության միջազգային դատարանն արձանագրել է, որ Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության 2-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն կոնկրետ դրսերումը «սպառնալիք» համարելը, կախված է նրանից՝ արդյոք նախատեսվող ուժի կիրառումն ուղղված կլինի որևէ պետության տարածքային ամբողջականության կամ քաղաքական անկախության, կամ Միավորված ազգերի կազմակերպության նպատակների դեմ<sup>19</sup>:

148. Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության 1-ին հոդվածի համաձայն, ի թիվս այլնի, Միավորված ազգերի կազմակերպության նպատակներն են.

«1. **Պահպանել միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը և այդ նպատակով արդյունավետ համախմբված միջոցներ ձեռնարկել՝ կանխելու և վերացնելու խաղաղության սպառնալիքները, ինչպես նաև ճնշելու ագրեսիայի կամ խաղաղությունը խախտող այլ գործողությունները, և խաղաղ միջոցներով, արդարության և միջազգային իրավունքի սկզբունքների հիման վրա հասնելու միջազգային վեճերի կամ խաղաղության համար վրանգավոր իրավիճակների շրկմանը կամ կարգավորմանը:»:**

149. Այսպիսով, հարկ է արձանագրել, որ «ուժի կիրառման սպառնալիքի» հասկացության բացահայտման իմաստով կարևոր է, թե հատկապես ինչ նպատակ է հետապնդում ձեռնարկված գործողությունը: Հատկանշական է, որ սույն գեկուցում ներկայացված տվյալների համաձայն՝ ադրբեջանական զինծառայողների կողմից կատարված գործողություններն ուղղված են քաղաքացիական խաղաղ բնակչության դեմ, նման գործողությունները սպառնում են խաղաղությանը և հանդիսանում են ագրեսիայի դրսերումներ (օրինակ՝ գենքի ցուցադրումը, սահմանամերձ բնակավայրերին մոտ տարածքներում հովհանքներին հայիոյելը, բարձրածայն

<sup>18</sup> Տե՛ս՝ Legality of the Threat or Use of Nuclear Weapons (Advisory Opinion) [1996] ICJ, պար. 47:

Հղումը <https://www.icj-cij.org/public/files/case-related/95/095-19960708-ADV-01-00-EN.pdf>

<sup>19</sup> Տե՛ս նույն տեղում, պար. 48:

սպառնալը, գիշերվա ժամերին ուժեղ լուսային սարքերի գործադրումը դեպի անձանց տներ և այլն): Միաժամանակ, կարևոր է ընդգծել, որ ադրբեջանական զինծառայողների ակնհայտ ապօրինի տեղակայումը << ինքնիշխան տարածքներում ուղղակի սպառնալիք է հանդիսանում պետության տարածքային ամբողջականությանը:

150. Ավելին՝ ինչպես արդեն իսկ ներկայացվել է զեկուցում, դրանց համատարած և պարբերական բնույթը փաստում է այն մասին, որ նման գործողություններն իրենց վերջնարդյունքում նպատակ են հետապնդում հարկադրել սահմանամերձ բնակավայրերում բնակվող անձանց լքել իրենց բնակավայրերը, ինչն իր հերթին հակասում է Միավորված ազգերի կազմակերպության նպատակներին:

151. Մասնավորապես՝ վկայակոչված նորմի համաձայն՝ Միավորված ազգերի կազմակերպության նպատակ է՝ պահպանել միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը:

152. Խաղաղության և անվտանգության ապահովման նպատակով ՄԱԿ-ի կանոնադրությամբ նախատեսվում է.

- կանխել և վերացնել խաղաղության սպառնալիքները,
- ճնշել ագրեսիայի կամ խաղաղությունը խախտող այլ գործողությունները,
- խաղաղ միջոցներով, արդարության և միջազգային իրավունքի սկզբունքների հիման վրա հասնել միջազգային վեճերի կամ խաղաղության համար վտանգավոր իրավիճակների շտկմանը կամ կարգավորմանը:

153. ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից թիվ 3314 բանաձնում<sup>20</sup> անդրադարձ է կատարվել ագրեսիայի հասկացությանը, մասնավորապես նշելով.

«Ագրեսիան պետության կողմից զինված ուժի կիրառումն է մեկ այլ պետության ինքնիշխանության, դարածքային ամբողջականության կամ քաղաքական անկախության դեմ կամ որևէ այլ ձևով որը չի համապատասխանում Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությանը:»:

154. ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի թիվ 3314 բանաձնի<sup>21</sup> համաձայն՝ հետևյալ գործողությունները համարվում են ագրեսիայի դրսնորումներ՝ անկախ պատերազմ հայտարարված լինելուց.

<sup>20</sup>

Հղումը՝

[https://documents-dds-](https://documents-dds-ny.un.org/doc/RESOLUTION/GEN/NR0/739/16/IMG/NR073916.pdf?OpenElement)

[ny.un.org/doc/RESOLUTION/GEN/NR0/739/16/IMG/NR073916.pdf?OpenElement](https://documents-dds-ny.un.org/doc/RESOLUTION/GEN/NR0/739/16/IMG/NR073916.pdf?OpenElement)

<sup>21</sup> Տե՛ս նույն տեղում:

- Պետության գինված ուժերի կողմից մեկ այլ պետության տարածք ներխուժումը կամ հարձակումը կամ ցանկացած ռազմական օկուպացիա, թեկուզ ժամանակավոր, (...),
- Պետության գինված ուժերի կողմից մեկ այլ պետության տարածքի ռմբակոծություն կամ պետության կողմից որևէ զենքի կիրառում որևէ մեկ այլ պետության տարածքում.(...):

155. Տվյալ պարագայում ադրբեջանական գինծառայողների կողմից տեղի է ունեցել ներխուժում << ինքնիշխան տարածք, ավելին՝ վերջիններիս << տարածքում պարբերական կրակահերթեր են իրականացնում: Միաժամանակ, վկայակոչվածին համադրելով այն հանգամանքը, որ խնդրո առարկա գործողությունները կրում են շարունակական բնույթ, ակնհայտ է, որ ադրբեջանական գինծառայողների կողմից կատարվող գործողություններն ակնհայտ ագրեսիայի դրսերումներ են: Ավելին՝ դրանք եզակի դեպքեր չեն, կատարվում են համատարած և պարբերաբար, ինչը թույլ է տալիս եզրահանգելու, որ այդ գործողություններն ինքնաբուիս չեն և ուղղորդված են:

**156. Ադրբեջանական գինծառայողների կողմից դրսերված վարքագիծն ուղղված է նաև Միավորված ազգերի կազմակերպության նպատակների դեմ, հանդիսանում է խաղաղության սպառնալիք և ագրեսիայի դրսերում:**

157. Այսպիսով, անդրադառնալով ուժի կիրառման սպառնալիքի առկայության վերաբերյալ պնդմանը՝ հարկ է արձանագրել, որ վկայակոչված դիրքորոշման լուսի ներքո, ադրբեջանական գինծառայողների կողմից պարբերաբար դրսերվող վարքագիծն ուղղակի սպառնալիք է հանդիսանում Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականությանը, ինչպես նաև հակասում է Միավորված ազգերի կազմակերպության նպատակներին, քանի որ հանդիսանում է ագրեսիայի դրսերում:

158. Այս առումով կարևոր է արձանագրել, որ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան թիվ 2625 հոչակագրի շրջանակներում, **շեշտադրել է, որ միջազգային իրավունքին հակասում են ուժի գործադրման սպառնալիքի բոլոր ձևերը՝ չմասնավորեցնելով դրանց կոնկրետ դրսերումներ:**

159. Այսպիսով, հարկ է արձանագրել, որ միջազգային իրավունքի լուսի ներքո կարևորվում է ուժի գործադրման սպառնալիքի առկայությունը, անկախ դրա դրսերման ձևից, ուստի սույն պարագայում նկատի ունենալով, որ նախանշված վերլուծությամբ հիմնավորվում է ադրբեջանական գինծառայողների կողմից ուժի

կիրառման սպառնալիքի գործադրումը, դրա իրականացման ձևերին անդրադառնալու նպատակահարմարությունը բացակայում է:

160. Զեկույցի սույն հատվածում վկայակոչված դրույթների համակարգային մեկնաբանությունը փաստում է, որ միջազգային իրավունքի տեսանկյունից անընդունելի են բոլոր այն գործողությունները, որոնք հետապնդում են բնակչության ահաբեկելու նպատակ, ինչպես նաև խախտում են անձանց բավարար կենսամակարդակի իրավունքը:

161. **Վկայակոչված խախտումների վտանգավորությունն առավելապես ընդգծվում է ադրբեջանցի բարձրաստիճան պաշտոնյաների իրապարակային հայտարարությունների լույսի ներքո, որոնք ուղղակիորեն փաստում են, որ պետության քաղաքականությունն ուղղված սահմանամերձ բնակավայրերի հայաթափմանը կրում է համատարած բնույթ:**

162. Ադրբեջանի խորհրդարանի պատգամավոր, իշխանամետ «Միասնական Ադրբեջանի ժողովրդական ճակատ» կուսակցության նախագահ Գուղրաթ Հասանգուլիսի կողմից նշվում է<sup>22</sup>:

«Հայաստանը պետք է վերջ գտա Ադրբեջանի դեմ դարաձքային պահանջներին, այսինքն՝ Ղարաբաղում իր թեժացրած արյունուր անջարողականությանը սարարելուն: **Քանի դեռ սա չի եղել, մենք չետք է ճանաչենք նրանց հանգիստ կյանքի իրավունքը:** Հակառակ դեպքում նրանք բանակցությունները ևս 30 դարի կծգեն: Եթե Հայաստանը Ադրբեջանի հետ հարաբերություններում խաղաղ և բարիդրացիական քաղաքականություն չվարի՝ Ադրբեջանում էթնիկ հայերի բնակվելը հնարավոր չի լինելու: Մենք պետք է այնպես անենք, որ նրանք մեկ վայրկյան իսկ դրա մասին չմոռանան: Ադրբեջանի նախագահը գիտի, թե Ղարաբաղի նկարմամբ պետական ինքնիշխանությունը վերականգնելու համար ինչ պետք է անենք: Իլիամ Ալիևը չի ցանկանում այս խնդիրը թողնել հետագա սերունդներին:»:

(...)

Գուղրաթ Հասնագուլիսը կարծում է, որ նրանք, ովքեր դեղի ունեցողները «գնահատում են» որպես Ադրբեջանի մասնակցություն Ռուսաստանի խաղին, Ադրբեջանի հաջողություններից վրդովվածներն են: «Բոլորը պետք է իմանան, որ նրանք այն երկրների շահերից ենք հանդես գալիս, որում ապաստանել են և հովանավորվում են:

<sup>22</sup> Հղումը՝ <https://www.xalqcebhesi.az/news/politics/110634.html>

Վստահ եմ, որ գաղտնի կերպով ուրախանում են նրանք, ում մեջ քիչ թե շատ հայրենասիրություն է մնացել: Բայց շատ ցավալի է, որ մարդիկ, ում հարազարդներին ահաբեկել ու սպանել են հայ ֆաշիստները. **իրենց «Հայկանուշի» նման են պահում և հայփարարություններ անում:»:**

163. Ադրբեջանի օրենսդիր մարմնի պատգամավոր Գուլբարթ Հասանգուլիկը վերոգրյալ պնդումներով, ըստ Էության, ընդունել է Լեռնային Ղարաբաղի բնակչության էթնիկ զտմանը միտված ադրբեջանական պետության քաղաքականության վարման փաստը:

164. Նշված հայտարարությունը Մարդու իրավունքների պաշտպանի կողմից ներկայացվել է միջազգային գործընկերներին, ինչպես նաև ՄԱԿ-ի ռասայական խտրականության վերացման հարցերով կոմիտեին:

Ադրբեջանի խորհրդարանի անկախ պատգամավոր **Զահիր Օրուջը** նշել է<sup>23</sup>:

«...«Առանց սպառուս հայերը կոչնչանան» նման գաղափարները նրանց ուղեղում գորի բալայաններն են փորձում ուժեղացնել: Գիտենք, որ **Երբ հայր հափուկ սպառուս է ունենում, իրեն միշտ հանցագործի և ագրեսորի պես է պահում:** Այժմ Ադրբեջանը վերահսկում է գործընթացները: ...Պետքությունը, երբեմն, արդյունքների կարող է հասնել ոչ թե պատերազմով, այլ ուժի ցուցադրմամբ: **Որպես օրինակ կարող ենք մարդնանշել այսօր Սարքաբա և մյուս բարձունքների վերահսկողությունը:** Ղարաբաղի, Խանքենդիի, Խոջավենդի ապագան կապված է միայն Ադրբեջանի ու ադրբեջանցիների հետ:»:

165. Ադրբեջանի խորհրդարանի մեկ այլ պատգամավոր, աշխատանքի և սոցիալական քաղաքականության հանձնաժողովի նախագահ **Մուսա Ղուլիկը** (իշխող «Նոր Ադրբեջան» կուսակցություն) նշել է<sup>24</sup>:

**«Զանգեզուրը, Գյոյչան, Իրավանը, Չուխուրյուրդը Ադրբեջանի հնագույն հողերն են: Յուրաքանչյուր ադրբեջանցի պետք է իրավունք ունենա գոնե այցելել այդ վայրերը, իր նախապատրի գերեզմանները, պահպանել և կիսվել հիշողություններով»:**

**Ինչպես ասում է մեր երկրի ղեկավարը. «մենք կգնանք այդ շրջաններ: Երբ ու ինչ փոխադրամիջոցով կգնանք, կորոշենք ինքներս: Մինչև հայերը խելքները գլուխները**

<sup>23</sup> Հղումը՝ <https://qaynarinfo.az/az/zahid-oruc-44-gunluk-muharibe-ermenileri-suni-statusdan-mehrum-etdi>

<sup>24</sup> Հղումը՝ <https://modern.az/zengezur/362078/gerbi-azerbaycanlilarin-huquqlari-taninmalidir-gyce-ve-zengezura-qayidis/>

*շհավաքեն՝ ապրելով իրենց օկուպացիոն և ռևանշիստական մտադրություններով, նրանց փլուզումը, որպես պետություն, արագորեն կիրագործվի։ Նրանք պետք է հասկանան դա։ Տարածաշրջանի պետությունները պետք է շահագրգոված լինեն հագրկապես Հայաստանի, Ադրբեյջանի եւ Թուրքիայի հետ դնդեսական համագործակցության, համակեցության և խաղաղության հասպատման հարցում։ Ես կարծում եմ, որ «վրեժ» գործողությունը ժամանակին, ճիշտ իրականացված ռազմական քայլ է։ Բայց մենք նաև մեզ իրավունք ենք վերապահում ապագայում ավելի մեծ գործողություններ իրականացնել։ Մենք ձգտում ենք պահպանել եռակողմ հայրարարության պայմանները»։*

166. Ադրբեյջանցի բարձրաստիճան պաշտոնյաների կողմից կատարված հայտարարությունները դիտարկելով ադրբեյջանական զինծառայողների կողմից շարունակաբար դրսերվող վարքագծի հետ համադրության մեջ՝ եզրահանգում ենք, որ գյուղերին ու համայնքներին շատ մոտ տեղակայված ադրբեյջանական զինծառայողների կողմից հոգեբանական ու այլ տեսակի ճնշումները ոչ թե պատահական, հատվածային բնույթի են, այլ ուղղակիորեն պետական միասնական քաղաքականության դրսերում են՝ միտված հայկական համայնքները հայաթափելուն և էթնիկ զտման ենթարկելուն, ինչին ականատեսն ենք լինում Արցախում ևս։

167. Ի հիմնավորումն վերոգրյալ եզրահանգման՝ հարկ է անդրադառնալ նաև ՄԱԿ-ի Ռասայական խտրականության վերացման հանձնաժողովի կողմից Ադրբեյջանի տասներորդից տասներկուերրորդ զեկույցների վերաբերյալ եզրափակիչ միավորված դիտարկումներին<sup>25</sup>։

«(...) Հանձնաժողովն իր խորը մտահոգությունն է հայդում հերկայալ հարցերի շուրջ։ (ա) 2020 թվականի մարտական գործողությունների ընթացքում և դրանից հետո ադրբեյջանական զինուժի կողմից ծագումով էթնիկ կամ ազգային ծագումով հայ ռազմագերիների ու այլ պաշտպանված անձանց նկարմամբ մարդու իրավունքների ծանր և կոպիտ խախտումների մասին մեղադրանքները, ներառյալ արդարադարձական սպանությունները, խոշտանգումները և այլ դաժան վերաբերմունքն ու կամայական

<sup>25</sup> Հղում՝ [https://tbinternet.ohchr.org/Treaties/CERD/Shared%20Documents/AZE/CERD\\_C\\_AZE\\_CO\\_10-12\\_4970\\_E.pdf](https://tbinternet.ohchr.org/Treaties/CERD/Shared%20Documents/AZE/CERD_C_AZE_CO_10-12_4970_E.pdf)

**Կալանավորումը, ինչպես նաև դպների, դպրոցների և այլ քաղաքացիական օբյեկտների ոչնչացումը.**

(թ) Հայկական մշակութային ժառանգության, ներառյալ Եկեղեցիների և պաշտամունքային այլ վայրերի, հուշարձանների, դեսարժան վայրերի, գերեզմանագրների և ծեռագործ իրերի ոչնչացման և վնասման մասին հաղորդումները, ինչպես նաև նման մեղադրանքների առնչությամբ կադարված հեղաքնությունների վերաբերյալ գեղեկարգվության բացակայությունը,

(զ) Ռասայական ագրելության հրահրում և ռասիստական կարծրագիպերի գարածում՝ **հայկական ազգային կամ էթնիկ ծագում ունեցող անձանց նկարմամբ, այդ թվում՝ համացանցում և սոցիալական ցանցերում հասարակական գործիչների և պետական պաշտոնյաների կողմից, ինչպես նաև հեղաքնությունների, հեղապնդումների, դարավճիռների և նման գործողությունների համար սահմանված պարժամիջոցների վերաբերյալ մանրամասն գեղեկարգվության բացակայություն,**

(ը) Խախտումների վերաբերյալ նման **հաղորդումների ուսումնասիրման և դրուժածներին փոխհարուցում և աջակցություն դրամադրելու անկախ և համապարփակ մեխանիզմի բացակայություն** (...):»:

168. Ավելին՝ ՄԱԿ-ի Ռասայական խտրականության վերացման հանձնաժողովի կողմից առաջարկվել է Ադրբեյջանին.

«(ա) Ուժեղացնել պարասիանարգվության ենթարկման և անպարժեիլության վերացմանն ուղղված պետրության ջանքերը, այդ թվում՝ արդյունավետ, բազմակողմանի և անկողմնակալ հեղաքնություն անցկացնելով ռազմագերիների և էթնիկ կամ ազգային ծագումով հայ այլ պաշտպանված անձանց նկարմամբ մարդու իրավունքների խախտումների մասին մեղադրանքների վերաբերյալ, այդ թվում՝ ամփոփ մահապարփանների, բռնի անհեղացումների, խոշտանգումների ու այլ դաժան վերաբերմունքի և կամայական կալանավորման, ինչպես նաև դպների, դպրոցների և այլ քաղաքացիական օբյեկտների ոչնչացման մասին հաղորդումների վերաբերյալ, որոնք իրականացվել են ադրբեյջանական զինուժի կողմից 2020 թվականի ռազմական գործողությունների համապերսպում և դրանից հետո, (...).

(...)

(ը) **Միջոցներ ձեռնարկել ագրելության խոսքի, ռասայական ագրելության և խորականության հրահրման և խթանման մշտադիմարկման և դրանց դեմ**

**պայքարի ուղղությամբ**, այդ թվում՝ համացանցում և սոցիալական ցանցերում պաշտոնյաների և հասարակական հասպառությունների կողմից, որոնք ուղղված են ազգային կամ էթնիկ ծագումով հայերի դեմ, և ապահովել, որ նման միջադեպերը արդյունավել, համապարփակ և անկողմնակալ կերպով հեղաքննվեն և, անհրաժեշտության դեպում մեղավորները հեղապնդվեն և պարժիշխատ հանցագործությանը համաչափ պարփակվեն:

169. **Հատկանշական է, որ Հանձնաժողովը, անդրադառնալով Մարդու իրավունքների ազգային հաստատություններին**, մտահոգություն է հայտնել այն մասին, որ 2018 թվականի մայիսին Մարդու իրավունքների ազգային ինստիտուտների գլոբալ դաշինքի կողմից Ադրբեյջանի մարդու իրավունքների հանձնակատարի կարգավիճակը իջեցվել է «B»՝ ինստիտուցիոնալ անկախության բացակայության պատճառով, մասնավորապես՝ մասնակից պետության կողմից թույլ տրված մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ լուրջ մեղադրանքները չդիտարկելու, ինչպես նաև Մարդու իրավունքների հանձնակատարի ընտրության և նշանակման թափանցիկ, մասնակցային և արժանիքահեն գործընթացի բացակայության պատճառով (հոդված 2):

170. **Հանձնաժողովի կողմից առաջարկվել է մասնակից պետությանը ձեռնարկել օրենսդրական և գործառնական միջոցներ՝ ամրապնդելու Ադրբեյջանի մարդու իրավունքների հանձնակատարի ինստիտուցիոնալ անկախությունը և ապահովելու Փարիզյան սկզբունքներին լիովին համապատասխան մանդատն իրականացնելու կարողությունը, ներառյալ՝ ներդնելով և կիրառելով Մարդու իրավունքների հանձնակատարի ընտրության թափանցիկ, մասնակցային և արժանիքահեն գործընթաց:**

171. **Հանձնաժողովի կողմից մտահոգություն է հայտնվել այն հաղորդումների առնչությամբ, համաձայն որոնց դպրոցական դասագրքերը քարոզում են նախապաշտումունքներ և ռասայական ատելության իրահրում, հատկապես էթնիկ հայերի նկատմամբ.** մասնակից պետությունում պատմություն դասավանդելիս տեղի է ունենում էթնիկ փոքրամասնությունների մարգինալացում:

172. **Հանձնաժողովը** մասնակից պետությանը նաև առաջարկում է միջոցներ ձեռնարկել դպրոցական դասագրքերի վերանայման գործընթացի ամրապնդման ուղղությամբ՝ հաշվի առնելով էթնիկ և մշակութային բազմազանության

հայեցակարգերը և ռասայական ատելության և խտրականության դեմ պայքարը կրթության բոլոր մակարդակներում:

173. Ամփոփելով զեկույցի սույն մասում ներկայացված փաստական հիմքերը, ինչպես նաև դրանք դիտարկելով վկայակոչված իրավական հիմքերի և ՄԱԿ-ի Ռասայական խտրականության վերացման հանձնաժողովի կողմից արտահայտված դիրքորոշումների լույսի ներքո՝ հարկ է արձանագրել, որ զինծառայողների գործողությունների համատարած և շարունակական բնույթը, ադրբեջանական բարձրաստիճան պաշտոնատար անձանց կողմից արտահայտված դիրքորոշումները, ինչպես նաև Հանձնաժողովի կողմից կատարված արձանագրումներն առ այն, որ ռասայական ատելությունը իրականացնելու եզրահանգել, որ բոլոր վեղը նկարագրված գործողություններն ունեն մեկ միասնական միտում, այն է՝ ահաբեկել սահմանամերձ բնակավայրերում բնակվողներին, տարածել խոճապ, խթանել հայատյացության և էթնիկ զտման քաղաքականությունը, այդպիսով նաև հայաթափել սահմանամերձ բնակավայրերը:

### **Գլուխ 3. Խմելու ջրի հասանելիության իրավունք**

174. Անդրադառնալով զեկուցում ներկայացված մյուս խնդիրներին՝ հարկ է հղում կատարել «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 11-րդ հոդվածով երաշխավորված իրավունքների վերաբերյալ ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների հանձնաժողովի՝ ջրի հասանելիության իրավունքի (թիվ 15 ընդհանուր մեկնաբանության շրջանակներում) վերաբերյալ մեկնաբանություններին, որտեղ Հանձնաժողովը հաստատել է, **որ այդ իրավունքների հետ կապված հիմնական պարտավորությունները ենթակա են կատարման անշեղորեն, այդ իրավունքներն անքակտելի են**<sup>26</sup>:

175. Միաժամանակ, սույն զեկուցում ներկայացված տեղեկությունների համաձայն՝ ադրբեջանական զինված ծառայողները Գեղարքունիքի մարզի որոշ բնակավայրերի հատվածում առաջ են եկել, ինչի հետևանքով տեղանքում գտնվող խմելու ջրի ջրամբարը հայտնվել է ադրբեջանցիների վերահսկողության տակ: Ստացված տեղեկությունների համաձայն՝ ադրբեջանական զինված ծառայողները, ՀՀ ինքնիշխան տարածք ներխուժելով, տեղակայվել են նաև ջրավազանների ու բնական աղբյուրների մոտակայքում: Առանձին դեպքերում ադրբեջանական զինվորականների ակնհայտ ապօրինի տիրապետության տակ են հայտնվել ջրավազաններն ու բնական աղբյուրները:

176. Այս առնչությամբ հարկ է արձանագրել, որ Հանձնաժողովի կողմից առանձնահատուկ կերպով ընդգծվել է, որ ջրի հասանելիությունը պետք է ապահովվի, ի թիվս այլնի, նաև կանխելով երրորդ կողմերի՝ որևէ եղանակով միջամտությունը ջրի իրավունքից օգտվելուն<sup>27</sup>:

177. Հատկանշական է, որ Հանձնաժողովն անդրադարձ է կատարել նաև այլ երկրներում ջրի հասանելիության իրավունքը հարգելու՝ Մասնակից պետությունների պարտավորությանը: Մասնավորապես՝ ջրի իրավունքի հետ կապված իրենց ստանձնած միջազգային պարտավորությունները կատարված համարելու համար Մասնակից պետությունները պետք է հարգեն այդ իրավունքի օգտագործումն այլ երկրներում: Միջազգային համագործակցությունը պահանջում է մասնակից

<sup>26</sup> Committee on Economic, Social and Cultural Rights, general comment No. 15 (2003) on the right to water (հոդվածներ 11 և 12), պար. 40:

Հղումը՝ <https://www.refworld.org/pdfid/4538838d11.pdf>

<sup>27</sup> Տե՛ս նույն տեղում, պար. 23:

**պետություններից զերծ մնալ միջամտող գործողություններից, ուղղակիորեն կամ անուղղակիորեն՝ այլ երկրներում ջրի իրավունքից օգտվելով<sup>28</sup>:**

178. Այսպիսով, հարկ է արձանագրել, որ ջրի հասանելիության իրավունքի ապահովումը նախևառաջ հանդիսանում է տվյալ պետության պարտավորությունը՝ մասնավորապես՝ համապատասխան իրավական հիմքերի ստեղծման, գործնականում ջրի հասանելիության ապահովման տեսանկյունից, միաժամանակ՝ այն հանդիսանում է յուրաքանչյուր այլ պետության պարտավորություն՝ զերծ մնալ միջամտող գործողություններից, որոնք որևէ կերպ խոչընդոտելու են այլ երկրում ջրի իրավունքից օգտվելուն:

179. Սույն պարագայում, Ադրբեջանի կողմից ակնհայտորեն խոչընդոտվում է խմելու ջրից օգտվելու՝ սահմանամերձ բնակավայրերի բնակիչների իրավունքը:

180. **Զեկույցում վկայակոչված փաստերի համաձայն՝ ադրբեջանական զինված ուժերի կողմից կատարվող գործողությունները, մասնավորապես՝ ադրբեջանական զինված ուժերի տեղաշարժը, ինչի արդյունքում վերջիններիս տիրապետության տակ են հայտնվել որոշ ջրի աղբյուրներ, ուղղակիորեն խախտում են տվյալ տարածքում բնակվող անձանց՝ ջրի հասանելիության իրավունքը:**

---

<sup>28</sup> Տե՛ս նոյն տեղում, պար. 31:

#### **Գլուխ 4. Բուժօգնություն ստանալու իրավունք**

181. «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

*«1. Սույն դաշնագրին մասնակցող պերությունները ճանաչում են յուրաքանչյուր մարդու ֆիզիկական և հոգեկան առողջության առավելագույնս հասանելի մակարդակի իրավունքը:»:*

182. Ինչպես արդեն իսկ վկայակոչվել է սույն գեկույցի նախորդ մասում՝ «Մարդու իրավունքների համընդհանուր հոչակագրի» 25-րդ հոդվածի 1-ին մասը նախատեսում է յուրաքանչյուրի՝ այնպիսի կենսամակարդակի իրավունքը, ներառյալ սնունդը, հագուստը, բնակարանը, **բժշկական խնամքը** և սոցիալական անհրաժեշտ սպասարկումը, որն անհրաժեշտ է **իր և իր ընտանիքի առողջությունն ու բարեկեցությունը պահպանելու համար**, և գործազրկության, հիվանդության, հաշմանդամության, այրիանալու, ծերության կամ իր կամքից անկախ ապրուստի միջոցներից զրկվելու դեպքում՝ ապահովելու իրավունք:

183. ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի «Առողջության պահպանման իրավունք»<sup>29</sup> վերտառությամբ գեկույցով արձանագրվում է, որ առողջության պահպանման իրավունքն իր մեջ ներառում է նաև առողջապահական խնամքի հասանելիության և հիվանդանոցների կառուցումը։ Առողջության պահպանման իրավունքն առավել տարածական է ընկալվում։ Այն ներառում է մի շարք գործոններ, որոնք կարող են օգնել վարել առողջ կյանք։ Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների հանձնաժողովը, որը պատասխանատու է Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի մոնիթորինգի համար, այդ գործոնները կոչում է «առողջության հիմքում ընկած պարտադիր նախապայմաններ»։ Դրանց թվին են դասվում անվտանգ խմելու ջուրը և համապատասխան սանիտարական պայմանները, անվտանգ և բավարար սնունդը, բնակարանը և այլն։

184. Միաժամանակ, նոյն գեկույցի շրջանակներում արձանագրվում է, որ բոլոր ծառայությունները, ապրանքները և հարմարությունները պետք է լինեն մատչելի, հասանելի, ընդունելի և որակյալ։ Գործող հանրային բուժօգնության և առողջապահական հաստատությունները, ապրանքներն ու ծառայությունները պետք է

<sup>29</sup> Հղումը՝ <https://www.ohchr.org/sites/default/files/Documents/Publications/Factsheet31.pdf>

հասանելի լինեն պետության ներսում բավարար քանակությամբ: Ընդ որում՝ դրանք պետք է հասանելի լինեն ֆիզիկապես՝ հասարակության բոլոր անդամների համար անվտանգ հեռավորության վրա, ինչպես նաև ֆինանսապես՝ առանց որևէ խտրականության: Առողջության պահպանման մատչելիությունը ենթադրում է նաև առողջությանն առնչվող տեղեկատվություն մատչելի ձևաչափով փնտրելու, ստանալու և տարածելու իրավունք (բոլորի, ներառյալ հաշմանդամություն ունեցող անձանց համար):

185. Ինչպես ուղղակիորեն բխում է զեկուցի տարբեր մասերում ներկայացված փաստահավաք աշխատանքների ուսումնասիրությունից՝ թե՛ Գեղարքունիքի, թե՛ Տավուշի մարզում որոշ բնակավայրերում առկա է անձանց առողջության պահպանման իրավունքին սպառնացող ակնհայտ և իրական վտանգ:

186. Մասնավորապես՝ որոշ դեպքերում արձանագրված առողջության պահպանման իրավունքի խախտումները դրսևորվում են նրանով, որ խմելու ջրի աղբյուրները հայտնվել են այլ պետության զինված ուժերի վերահսկողության ներքո գտնվող տարածքներում, ինչի արդյունքում դրանցից օգտվելն ուղղակիորեն վտանգ է սպառնում բնակիչների առողջությանը: Վերոգրյալով պայմանավորված տվյալ բնակավայրերում խմելու ջուրը հասանելի չէ բնակիչների համար, ուստի վերջիններս ստիպված են լինում այդ իրավունքի իրացումն ապահովել որոշակի պարբերականությամբ (որոշ դեպքերում ընդհուած երկու օրը մեկ անգամ մեկից երկու ժամով) կատարվող ջրամատակարարումներից ջրի պաշարների պահուստավորմամբ կամ այլ բնակավայրերից, որոշ դեպքերում ոտքով, ջուր բերելու միջոցով: Ակնհայտ է, որ նման պայմաններում առողջության պահպանման իրավունքի պարտադիր նախապայման որակված խմելու ջուրը հասանելի չէ բնակիչների համար:

187. Ավելին՝ զեկուցի շրջանակներում ներկայացվել է որոշ բնակավայրերի բնակիչների կողմից բարձրացված միջիամայնքային ճանապարհների անանցանելիության հարցը, ինչը ևս ուղղակիորեն իր ազդեցությունն է ունենում առողջության պահպանման իրավունքի ապահովման վրա: Մասնավորապես՝ որոշ բնակավայրերում բնակիչները զրկված են ոչ միայն տեղում բուժօգնություն ստանալու, այլ նաև անցանելի ճանապարհով այլ բնակավայր բուժօգնություն ստանալու համար տեղափոխվելու հնարավորությունից:

188. Զեկույցի շրջանակներում փաստվել է նաև, որ տեղերում բուժսպասարկման բացակայության պայմաններում, անձինք զրկված են լինում պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության ու սպասարկման իրավունքի իրացման հնարավորությունից, քանի որ դրա շրջանակներում տրամադրվող դեղերի տեսականին անբավարար է և պատշաճ կարգով չի մատակարարվում:

189. Արձանագրվել են նաև դեպքեր, երբ թեև համայնքին հատկացված են եղել շտապօգնության մեքենաներ, սակայն ֆինանսական կամ տեխնիկական խնդիրների պատճառով գործնականում դժվարություններ են առաջանում դրանց սպասարկման և շահագործման հարցում: Երբեմն, շտապօգնության մեքենաները կանչի դեպքում ժամանում են բուժօգնության կարիք ունեցողին միջինում երկու ժամվա ընթացքում, քանի որ տեղակայված են բնակավայրից հեռու՝ այլ քաղաքում:

190. Համադրելով սույն մասում վկայակոչված իրավական հիմքերը վերոգրյալ փաստական հանգամանքների հետ՝ հարկ է արձանագրել, որ ներկայացված բոլոր օրինակներում պետության կողմից ապահովված չէ իր պողիտիվ պարտավորության կատարումը: **Այս առնչությամբ կարևոր է արձանագրել նաև, որ բժշկական օգնություն ստանալու իրավունքը, ինչպես նաև առողջության պահպանման իրավունքը ենթակա չեն սահմանափակման ֆինանսական կամ տեխնիկական պատճառաբանություններով, և պետության կողմից պետք է գործադրվեն պատշաճ ջանքեր հնարավորինս արագ և ապահով եղանակով ապահովելու վկայակոչված բնակավայրերի բնակիչների առողջության պահպանման իրավունքը:**

## VI. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Գործադիր և օրենսդիր իշխանության մարմիններին՝ առաջարկվում է գործադրել միջազգային բոլոր մեխանիզմները, ներառյալ տարբեր ձևաչափերով իրականացվող բանակցությունների հարթակները՝ ապահովելու սահմանամերձ բնակավայրերի բնակիչների համար նվազագույն կենսամակարդակ ու առօրյա կյանքի անվտանգության երաշխիքներ:
- Միջազգային իրավական հարցերով կառավարության ներկայացուցչի գրասենյակին՝ շարունակել միջոցներ ձեռնարկել ադրբեջանական գինծառայողների կողմից կատարվող ահաբեկչական գործողությունների, ինչպես նաև սահմանամերձ բնակավայրերի բնակիչների անվտանգությանը սպառնացող շարունակաբար դրսւորվող վարքագծի կապակցությամբ Մարդու իրավունքների Եվրոպական դատարանին, Արդարադատության միջազգային դատարանին, Միավորված ազգերի կազմակերպության մարդու իրավունքների հանձնաժողովին համապատասխան տեղեկությունների պարբերական տրամադրման, ինչպես նաև իրավական գործընթացներով սահմանամերձ բնակչության անվտանգությունն ու նվազագույն կենսամակարդակի և խոշտանգումներից ու ահաբեկումից ազատ ապրելու իրավունքի ամրապնդման ուղղությամբ:
- Գեղարքունիքի և Տավուշի նշված համայնքների տեղական ինքնակառավարման մարմիններին՝ միջոցներ ձեռնարկել գեկույցում ներկայացված բնակավայրերում հողօգտագործման ստեղծված իրավիճակի գնահատման և վերանայման ուղղությամբ՝ հնարավորինս ապահովելով սահմանամերձ բնակավայրերում ապրող անձանց համար հողօգտագործման հասանելիություն: Միաժամանակ, հողօգտագործման հասանելիության ապահովմանը զուգահեռ անհրաժեշտ է ապահովել նաև ոռոգման ջրի հասանելիությունը բոլոր այն տարածքներում, որտեղ առկա է ոռոգման ջրի խնդիր:
- Գործադիր իշխանության և տեղական ինքնակառավարման մարմիններին՝
  - առավել նախաձեռնողական կերպով տեղերում հաշվառել համայնքների խնդիրները՝ զբաղվածության, աջակցության ու զարգացման ծրագրերն առավել թիրախային ու անվտանգության հարցերի նկատմամբ զգայուն դարձնելու համար, ինչպես նաև տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին տրամադրել խորհրդատվություն և աջակցություն կառավարության կողմից իրականացվող ծրագրերից լավագույնս օգտվելու նպատակով,

- նկատի ունենալով այլ պետության զինված ուժերի հսկողության տակ հայտնված ջրի աղբյուրների անօգտագործելիությունը՝ անհրաժեշտ է հստակ քայլեր նախաձեռնել խմելու ջրի հասանելիության ապահովման ուղղությամբ, ի թիվս այլնը ընթացիկ ու նախապատրաստվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում, ընդ որում նկատի ունենալով ինչպես առհասարակ խմելու ջրի առկայության ապահովման պահանջը, այնպես էլ ջրամատակարարման համապատասխան պարբերականության ապահովումը: Ինչպես նաև երաշխավորել հանրային ծառայությունների հասանելիությունը յուրաքանչյուր համայնքում՝ անկախ բնակավայրի հեռավորությունից կամ համայնքի բնակիչների թվից,
- բուժօգնություն ստանալու անձանց իրավունքի ապահովման նպատակով անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել ինչպես տեղերում բժշկական անհրաժեշտ օգնության հասանելիության և մատչելիության ապահովման, այնպես էլ հասանելիության այլ խնդիրների (միջիամայնքային ճանապարհաշինություն, շտապօգնության մեքենաների հատկացում, տեխնիկական վերագինում) հնարավորինս հրատապ լուծման ուղղությամբ,
- առաջնահերթության կարգով լրացուցիչ միջոցներ ձեռնարկել ուղիղ նշանառության տակ գտնվող դպրոցների, մանկապարտեզների անվտանգության երաշխավորման համար՝ ներդնելով բավարար անվտանգային մեխանիզմներ և իրականացնելով իրազեկման հանրային արշավներ,
- սահմանամերձ բնակավայրերի բնակիչների համար ապահովել իրենց իրավունքների և անվտանգային հարցերի վերաբերյալ կանոնավոր, հստակ և մատչելի հանրային հաղորդակցություն,
- ապահովել ապաստարանների, թաքստոցների կահավորման, ֆիզիկական վիճակը՝ սահմանված նորմերին համապատասխան,
- ստեղծել և զարգացնել կրթության իրավունքի իրացման համար իրական, կարիքահեն և հասանելի պայմաններ ու հնարավորություններ բոլոր համայնքներում, ինչպես նաև ներդնել լրացուցիչ կոնկրետ ծրագրեր որևէ արտաքին գործոնի հետևանքով խոցելի դարձած երեխաների կրթության իրավունքի իրական երաշխավորման համար:



Նկար 1 (Զինարիի մանկապարտեզ)



Նկար 2 (Չինարիի մանկապարտեզ)



Նկար 3 (Չինարիի մանկապարտեզ)



Նկար 4 (Չինարիի մանկապարտեզի «ապահով վայր» սենյակը)



Նկար 5 (Այգեծորի մանկապարտեզի ապաստարանը)



Նկար 6 (Բերքաբերի մանկապարտելի ապաստարանը)



Նկար 7 ( Բերքաբերում «ապահով վայր» սենյակ)



Նկար 8 (Բարեկամավանի բույժ-մանկաբարձական կետը)



Նկար 9 (Բարեկամավանի բույժ-մանկաբարձական կետը)



Նկար 10 (Այգեձորի հիվանդանոցը)